ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՎԱԾՔ

ԴԱՎԻԹ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ԿԱՄԵՐԱՅԻՆ ՀԱՄԵՐԳ 3

ՄՀԵՐ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ
ՎԱՂԸ ՉԷ ՄՅՈՒՍ ՕՐԸ 8

ՎԱՉԱԳԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ 14
ԹՌՉՈՂ ԱՎՏՈԲՈՒՍԸ 17

ՏԱԹԵՎ ՄԱՂԱՔՅԱՆ
ՋՈՀԸ 25

ԱՐԹՈՒՐ ՄԻԿՈՅԱՆ
ԱՐԱԳԱՅՐՈՒ, ԱՍԱ՛ ՀԱՋՈՐԴ ԲԱՌԴ 28
ԹՈՒԼԱՄՏՈՒԹՅՈՒՆ 31

ՎԱՐԴՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԵՐԿՆԱՊԱՐԳԵՎ 35

ԳՐԻԳ
ՔԱՂԱՔԻ ՎՐԱ՝ ԹԱՆՁՐ ՄԱՌԱԽՈՒՂ 39

ՎԵՊ

ՋԵՍԱՀ
ՀԱՏՎԱԾ ԱՆՎԵՐՆԱԳԻՐ ՎԵՊԻՑ 42

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՊԵՐՃՈՒՀԻ ԱՒԵՏԵԱՆ
ԻՆՔՆԱՁՆՆՈՒՄ 19

ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՆՇԽԱՐՆԵՐ ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻՑ 49

Հրատարակված է պետական աջակցությամբ

Խմբագիր՝ Սուսաննա Հարությունյան

ԿԱՅԱՐԱՆ (2019.1)։ Գրական հանդես.- Եր.։ Էդիթ Պրինտ, 2019.- 64 էջ։

Կայարան
գրական հանդես

ISSN 1829-4391

© Էդիթ Պրինտ, 2019

ԴԱՎԻԹ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԿԱՄԵՐԱՅԻՆ ՀԱՄԵՐԳ

Պատշգամբից երևում էր միայն գմբեթը՝ թեթև ձյունը վրան, իսկ հյուրանոցի շրջակայքում հալոցք էր: Կարոն դեռ առաջին գործուղումից գիտեր, որ վանքը շատ հեռու չէ, և կարելի է ոչ ավելի, քան կես ժամվա զբոսանքով հասնել տասներեքերորդ դար: Բայց առաջին անգամ պայծառ, գունավոր աշուն էր, մոսկվացի հյուրերը հրճվանքով ասում էին, թե մեզ դրախտ եք բերել, և Կարոն տարավ նրանց ոտքով: Ճանապարհի կեսին մի ծերուկ պատահեց՝ սպիտակ ավանակի հետ: Հյուրերն ավելի ոգևորվեցին և անպայման լուսանկարվել ցանկացան, հետո ծերուկը մի մեծ շիշ հանեց խուրջինից ու հանդիսավորությամբ հայտարարեց, թե մինչև իր գինու համը չտեսնեն՝ ոչ մի քայլ առաջ չեն գնա: Իհարկե, առանց առարկությունների խմեցին՝ էմալապատ թասը ձեռքից ձեռք փոխանցելով, միմյանց երկար կյանք ու առողջություն մաղթելով, իսկ երբ արդեն հին բարեկամների պես բաժանվում էին, ծերուկը բռնեց Կարոյի թևն ու ասաց. «Էս մարդիկ թող իմանան, որ սպիտակ էշին դեմուդեմ գալը բարի բախտի նշան ա»: «Իրո՞ք»,- զարմացավ Կարոն: «Փորձված բան եմ ասում,- վստահեցրեց ծերուկը,- մեր պապերից ենք լսել»: Կարոն թարգմանեց: Գլխավոր հյուրն ու նրան ուղեկցող փարթամ, կապուտաչյա տիկինը քահ-քահ ծիծաղեցին, ծերուկը քթի տակ խնդաց ու անխոս հեռացավ՝ ինքնամփոփ, անտարբեր ավանակի հետ, իսկ իրենք շարունակեցին քայլել դեպի

վեր: Կարոն չէր հոգնում, չնայած համարյա ամբողջ օրը ոտքի վրա էր անցկացրել, իսկ այդ աշնան միջից ճառագայթող մի անխորտակելի պատրանք առանց հատուկ ջանքեր վատնելու ներշնչում էր նրան, թե աշխարհը միշտ այսպես ոսկեզարդ ու նույնիսկ՝ անձմեռ կմնա: Պատշգամբում, այնուամենայնիվ, չարժեր երկար կանգնել: Խոնավ սառնությունն ստիպում էր ներս անցնել, ու նա սենյակ վերադարձավ: Պայուսակը դրված էր սեղանիկին: Վերարկուն սպասում էր՝ մահճակալին գցված: Ծավարշը նոր էր գնացել՝ ասելով, թե մեքենայի վրա ամենաքիչը դեռ մի ժամվա գործ կա, և մնում էր ենթարկվել այդ դատավճռին: Դեռ երեկ հարկի հերթապահը հարցրել էր, թե առավոտվա քանիսի՞ն են դուրս գալու: «Կեսօրին,- պատասխանել էր Կարոն, որովհետև մինչև այդ դեռ թղթեր ունեին ստորագրելու,- ի՞նչ կա որ»: - «Մեծ խումբ ենք սպասում, հենց էդ ժամին էլ գալու են: Բայց մինչև սենյակները մաքրենք...»:

Կարոն խոստացել էր, որ համարն ավելի շուտ կհանձնի: Որտեղի՞ց իմանար, որ Ծավարշի բազմաչարչար «Գազելը» չի ցանկանա նույնիսկ տեղից պոկվել: Մի կողմ հրեց վերարկուն: Նստեց մահճակալին, որ ծխի: Չծխեց, որովհետև տուփն արդեն դատարկ էր: Գմբեթը, իսկ գուցե հիշողությունը, ճգում էր: Բայց վանքի զառիվեր ճանապարհին հիմա լպրծուն ցեխ կլիներ ու ցեխի հետ խառնված ձյուն: Դրախտային աշունը վաղուց չվել էր այս սարերից, ու հազիվ թե իմաստ ուներ գմբեթի ուղղությամբ գնալ, քանի դեռ ճանապարհների հին ընկեր Ծավարշը՝ կյանքից առանց այդ էլ միշտ դժգոհ, փորձում էր ուշքի բերել մեքենան: «Էս ավտոյին շատ քնքուշ անուն են դրել,- անսպասելիորեն սրամտել էր նա,- դրա համար էլ շուտ-շուտ ա փչանում»:

Դուռն անվստահ թակեցին: Ինչ խոսք, դա Ծավարշի ձեռքը չէր: Կարոն բացեց: Ներսին կանգնած էր հարկի հերթապահը՝ կարճափեշ մուշտակն ուսերին:

- Արդեն դուրս եմ գալիս,- միանգամից ասաց Կարոն,- բարև Ձեզ:

- Համ էլ Ձեզ հեռախոսի մոտ են կանչում, ներքևում, առաջին հարկ:

- Ենորհակալ եմ, հիմա կիջնեմ:

Առիթ էր, հագավ վերարկուն, պայուսակն ուսին գցեց, վրա բերեց մի ժամանակ սպիտակ, իսկ հիմա բոլորովին գորշացած դուռը, կողպեց խոշոր բանալիով: Միջանցքի հնամաշ ուղեգորգին ցեխոտ ոտնահետքեր էին դաջվել: Նեոնե լամպերից մեկն անտեղի վառվում էր առաստաղի տակ, մյուսը՝ ջղաձգորեն թարթում: Կիսաբաց դռան հետևում կնոջ զգուշավոր ծիծաղ հնչեց, իսկ անորոշ մի անկյունից ռադիոն թերթերի տեսություն էր հաղորդում: «Զարմանալի է,- մտածեց Կարոն, այստեղ, մեզանից բացի, ուրիշ շունչ-արարած էլ կա: Ու դեռ մի ամբողջ խումբ է գալու: Ո՞վ է փետրվարի կեսերին երկու ժամվա ճամփա կտրում, որ հասնի սարերի մեջ ծվարած մի քաղաք»:

Իսկ առաջին հարկում կյանքն արդեն եռում էր: Նախասրահի լայն բացված դռներից լրջադեմ տղաներ ու աղջիկներ էին մտնում, ձեռքներին՝ ջութակ ու թավջութակ և էլի ինչ-որ գործիքներ: Լսափողը Կարոյին էր սպասում՝ գրանցման սեղանին դրված:

- Ես եմ,- ասաց Կարոն՝ ակամայից զննելով նորեկներին:

- Դեռ չենք պրծել,- բղավեց Ծավարշը լսափողի միջից,- էս գործը վայ թե երկար քաշի:

- Ուրախ եմ,- պատասխանեց Կարոն:

- Մի վախենա, էսօր տուն կհասնենք,- դարձյալ բղավելով հանգստացրեց Ծավարշը,- դու Երևան զանգի, զգուշացրու:

- Լավ,- ասաց Կարոն: Հետո հարցրեց՝ արդեն ադմինիստրատորին դիմելով,- Ձեզ մոտ համե՞րգ է լինելու:

- Երեկոյան,- պատասխանեց ադմինիստրատորը,- եկել են, որ կուլտուրայի տանը նվագեն:

- Ես կարո՞ղ եմ պայուսակս Ձեզ մոտ թողնել: Մի երկու ժամ դեռ թափառելու եմ:

- Համեցեք,- ասաց ադմինիստրատորը,- ես Ձեզ հիշում եմ գիտե՞ք: Մոսկվացիների հետ էիք մեզ մոտ, մագիստրալն ընդունելու գործով:

Կարոն ժպտաց: Ինքն էլ էր մտապահել այդ կնոջը՝ համալսարան ավարտածի կրծքանշանը բաճկոնին: Բայց հիմա ուրիշ բաճկոն էր՝ ավելի նորառած և առանց ռոմբաձև կրծքանշանի, ու արդեն ձերմակող մազեր, իսկ հյուրերի հետ վանք բարձրանալու գաղափարը վերջին պահին ծագեց, Երևան վերադառնալուց առաջ: Կարոն կարծում էր, թե այնտեղ ոչ ոք չի լինի, բայց ներսից կիթառի ծլնգոցներ էին լսվում, և ինչ-որ մեկը՝ աղջկական մաքրամաքուր մի ձայն, երգում էր. «Այս գիշեր տո-ռ-ն է, հոգվույս կիրակի-ի-ի...»:

Կանգ առան: Աջից ու ձախից՝ թափված խնձորներ, մի քանի դարերից պահ տրված լռություն, օդում պտտվող բզեզ ու... երգը: «Вот и ангелы поют»,- մրմնջաց փարթամաշուք տիկինը, Կարոյին թվաց՝ անտեղի, որովհետև սա հենց այն դեպքն էր, երբ բառերը պակասեցնում էին գեղեցկությունը: Միանգամից ներս գնալ չէր լինի, եթե հրեշտակը երգում է՝ չեն խանգարում: Գլխավոր մոսկվացին հարցրեց՝ ինչո՞ւ ռեստավրացիա չեն անում, հրեն՝ գմբեթի կողքից ուր որ է ծառ կաճի: Կարոն ասաց՝ ո՞ր մեկը հասցնեն, բայց սա, միևնույն է, ուխտատեղի է, օրեր կան, երբ շրջակա բոլոր գյուղերից գալիս են: Ես հավատացյալ չեմ, այնուամենայնիվ, ընդգծեց մոսկվացին, բայց այսպիսի տեղերում միշտ էլ մի խորհրդավոր բան կա: Երգը դադարեց, ներս մտան: Երեք ջահել, մեկը՝ աղջիկ, մոմ էին վառում խորանի դիմաց: Կիթառը հենած էր պատին: «Ափսոս,- ասաց Կարոն իր ուղեկիցներին,- գլխի չընկանք, մոմ

չվերցրինք: Գոնե տնտեսական խանութից կարելի էր առնել»: Ճիշտ է, հնարավորին չափ կամաց ասաց, բայց աղջիկն այդ խոսքերի վրա շրջվեց: «Մեզ մոտ կա,- թեթևակի ժպտաց նա կիսամութի միջից,- եթե ուզում եք՝ տանք»: «Իսկ կարելի՞ է,- շփոթվեց Կարոն,- չէ՞ որ ամեն մարդ իր մոմը պետք է վառի»: «Համարեք, որ Ձերն են»: Բանալին հանձնեց, հրեց զսպանակով դուռն ու դուրս եկավ:

Դիմացի մայթին, խանութի մոտ, մի քանի երեխա հավալլա էին խաղում: Ոչ ցուրտ էր, ոչ էլ առանձնապես տաք: Կարոն շրջանցեց ջրափոսը, անցավ փողոցն ու մտավ խանութ: Երկու վաճառողուհիները, գլուխ-գլխի, խաչբառ էին լուծում: Նրանցից մեկը հայացքը կտրեց թերթից ու դժգոհ, թե՞ տարակուսանքով նայեց անծանոթ հաճախորդին: Աջ անկյունից մի լղարիկ կատու հայտնվեց, ճկվեց ու ցատկեց վաճառասեղանին:

- Կորի՛,- զայրացավ կանանցից մեկը: Կատուն իսկույն իջավ:

- Ի՞նչ եք ուզում, եղբայր ջան:- Հայոց թագուհի,- ասաց մյուս վաճառողուհին,- ութ տառ:

- Փառանձեմը կլինի,- ենթադրեց Կարոն՝ հախճապակյա բաժակներին, թեյնիկներին, մեծ ու փոքր սկուտեղներին նայելով:

- Ճիշտ որ:

Աղմկելով ու հրմշտվելով՝ ներս լցվեցին հավալլա խաղացող երեխաները: Կատուն անկյուն փախավ, թաքնվեց արկղերի ետևում:

- Մամ,- ասաց ամենափոքրը,- կոճակս պոկվեց: Համ էլ ջուր տուր:

Կարոն այստեղ ավելորդ էր: Դուրս ելավ, հիշեց, որ անծխախոտ է մնացել, բայց քայլեց դեպի վարչության բակ՝ «Գազելն» ու Ծավարշը այնտեղ էին: Այդ ավտոն չուզենալով էր եկել՝ ճանապարհին երկու անգամ կանգ առան, չարչարվելով խելքի բերեցին, օրն արդեն չբավականացրեց, ստիպված գիշերեցին հյուրանոցում, չնայած վարչության պետն ասում էր. «Եկեք մեր տուն տանեմ, երկու հարկ կյանքս մաշելով սարքեցի, բայց հիմա սենյակներս դատարկ են. տղաս բանակից հետո ամուսնացավ, Սարատովում մնաց, իսկ աղջիկս սովորում է Երևանում»: Կարոն թեյարանի մոտով էլ անցավ՝ փակ էր: Դռանը գրություն էր կպցրած. «Սանիտարական օր»: Արձակեց վերարկուի կոճակները՝ օդը ջերմացել էր առավոտվա համեմատ, իսկ փողոցը համարյա թե անմարդ էր ու խորթ լինելու չափ անաղմուկ: Ոտքը չգիտես ինչու կախ գցած կամ նույնիսկ անսպասելիորեն կանգ առած ժամանակի զգացողություն էր ծիկրակում այս ալարկոտ օրվա ու չնախատեսված դադարի հանդիպումից՝ դեռ չավարտված ձմեռվա ու հերթից առաջ ընկած վաղ գարնան սահմանագծին, որի մեջ իրար էին խառնվում թե՛ հմայք, թե՛ տագնապ, այստեղ հավերժորեն մնալու և այստեղից որքան հնարավոր է շուտ մեկնելու ցանկություն: Իսկ ո՞ւր

Կայարան գրական հանդես

էր ընդառաջ եկող իշուկը, իր ցեղի բացառությունը՝ սպիտակ: Ո՞ւր էր գինու թաս առաջարկող ծերունին: Վանքի մոտ կրկնակի դարձած աշունը՝ անեռևույթ կիթառի ծլնգոցներով, թեպետև՝ մի քիչ անվարժ: Երգը: Կարծում եք՝ Աստված երկու անգա՞մ է բարի բախտ խոստանում:

Աղջկա մոտ մնացած մոմերը երկուսն էին: Կարոն դրանք մոսկվացիներին փոխանցեց: «Դուք այս գիշեր մեկնում եք,- ասաց, վառեք, որ ձեր վայրէջքը փափուկ լինի: Ես իմ մոմը ինձ ու շեֆիս համար կվառեմ,- ելքը գտավ փարթամափայլ կապուտաչյան,- ի վերջո, Դուք էլ Ձե՛ր նվիրական ցանկությունը կունենաք»:

Կարոն ևս մի ջրափոս շրջանցեց: Ձախից սյունազարդ շինություն էր, ճակատին խոշոր ու տգեղ տառերով գրված էր՝ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏՈՒՆ, իսկ սյուներից մեկին ազդագիր էր սոսնձված: «Կամերային երաժշտության համերգ,- կարդաց Կարոն,- Երևանի կոնսերվատորիայի նվագախումբ: Ծրագրում՝ Կոմիտաս, Շոստակովիչ, Վիվալդի»: Պատկերացնենք, որ մեր «Գազելը» դեռ մինչև երեկո չի սարքվում: Հրաժարվում է մեզանից, ըմբոստանում: Ինչ լավ առիթ՝ ժամը վեցին համերգի ենք գալիս, վերարկուն ուսերին գցած՝ տեղավորվում է ճռճռացող թիկնաթոռին՝ «Տարվա եղանակների» սպասումներով: Մի քանի տեղացի արվեստասերներ, նաև՝ մշակութային միջոցառման բերված կոլեկտիվ: Ոմանք երբեմնակի հազում են, ոմանք՝ ուշացումով մտնում, իսկ ոմանք էլ՝ փսփսում իրար ականջի: Բայց ոչինչ, առայժմ ոչ մի եղանակ չի սկսվել, առայժմ գործիքներ են լարում: Բայց ո՞վ ասաց, որ դա էլ երաժշտություն չէ:

Ինչ-որ մեկը թեթևակի թփթփացրեց Կարոյի ուսին: Կարոն շրջվեց. Ծավարշն էր:- Աչքդ լույս,- ասաց նա,- սարքեցինք:

- Վատ նորություն չի,- ժպտաց Կարոն:

- Մի նորություն էլ կա,- շարունակեց Ծավարշը,- Երևանում միտինգներ են սկսվել: Օպերայի մոտ լիքը մարդ կա հավաքված:

- Բայց ինչո՞ւ,- հարցրեց Կարոն:

- Ղարաբաղի համար: «Գազելն» արագ էր գնում: Արդեն կես ժամ կլիներ, չէին խոսել: Կարոն ծխում էր Ծավարշի սիգարեթները՝ կծու, մի գլուխ հանգչող: Մի ուրիշ կյանքի ընդառաջ սլանալու զգացողությունը՝ դեռ աղոտ, դեռ գործիքներ լարող նվագախմբի խառնաձայնության պես անվերծանելի, կամաց-կամաց կուտակվում էր ընթացքի հետ:

- Հիշո՞ւմ ես,- հանկարծ հարցրեց նա Ծավարշին,- մենք հինգ տարի առաջ էլ էինք էս կողմերը եկել:

- Հետո՞,- անկիրք արձագանքեց Ծավարշը:

- Տուն հասանք, աղջիկս հենց այդ գիշեր ծնվեց:

ՄՀԵՐ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ՎԱՂԸ ՉԷ ՄՅՈՒՍ ՕՐԸ

Նվիրում եմ մահապարտներին

Վաղը չէ մյուս օրը: Հենց այդպես էլ ասաց: Վաղը չէ մյուս օրը, երբ արևը թեքվի դեպի արևմուտք ու գլորվի երկնակամարի ուղեծիրն ի վար, կսկսվի խաչակրաց արշավանքը: Ասաց, որ մեզ ևս մեկ արթնացում է պետք, որ թշնամին նույն թշնամին է, որ փախչում էր մեր առաջ, մենք էլ՝ նույն մենքը: Ասաց, որ մեռնելու ու ապրելու հավանականությունը հիսուն-հիսուն է: Վերցրեց կավիճը, մի կարմիր գիծ քաշեց կյանքի ու մահվան սահմանագծին ու երկու օր ժամանակ տվեց մտածելու համար: Ո՞վ կհայտնվի այս կողմում, ո՞վ կհայտնվի այն կողմում՝ չգիտենք: Չենք էլ ուզում մարգարեի թիկնոց հագնել ու գուշակություններ անել հինգհարյուր ընտրյալների մասին: Մահվան ու կյանքի հարցը սահմանված է նախախնամությամբ, և գուշակություններ անելը անշնորհակալ գործ է: Ավելի լավ է վերհիշենք այդ պատմությունը որպես մի հեքիաթ ու հեքիաթի պես էլ պատմենք:

Ժուկով ժամանակով, երբ բոլորիս սրտից արյուն էր ծորում, ու ցավը մեղմելու այլ ճանապարհ չկար, մեզանից մեկը, մի խենթ ու խելառ մեկը, ում վիճակված էր առաջինը համտեսել ամենուր առատորեն հոսող արյան համը, ոտքի է կանգնում, առանց աջուձախ անելու՝ ձեռքը խփում սեղանին ու ավետում. «Տղերք, վեր կացեք, գնում ենք մեռնելու: Մեռնենք, որ մնացածը ապրեն»:

Ոմանք, առավել սթափներն այս կոչը խելագարություն են որակում, որոշ հոռետեսներ չեն դիմանում սև մաղձը դուրս թափելու գայթակղությանը ու հուսահատության ճիչ են տեսնում այդ ազնիվ ջանքերի հետնախորշերում: Քաղաքական մանր-մունր պոռնիկներն էլ մանրակրկիտ վերլուծության արդյունքում դատապարտում են ժողովրդին մոլորության մեջ գցելու անհեռատես փորձերը, իսկ ակադեմիաներում թրծված գիտունիկ ռազմավարները մնում են բերանբաց: Բարեբախտաբար, թերահավատներին պիտի հիասթափեցնեմ, քանի որ հնչեցված խոսքը, որ իրականում երկու րոպե տևողությամբ մի պարզ մարտակոչ էր, լավ էլ գտավ իր ունկնդրին: Թափանիվը սկսեց պտտվել, երբ մի իմաստուն մարդ, որ այնքան իմաստուն էր, որ իր իմաստնության ձեռը կրակն էր ընկել ու կյանքի վերջում խելքը թռցրել, սրտաբուխ բացականչեց. «Գժեր, գժվեք, ժամն է եկել հատուցման»: Եթե խոսքը սրտից է գնում, անպայման հասնելու է թիրախին ու առանց դույզն ինչ խղճմտանքի խոցելու է այն:

Թե ինչ եղավ հետո, հիմա, երբ անցել է քառորդ դար, ոչ ոք չի էլ հիշում: Չեն հիշում, թե հատուցումն ի վերջո վրա հասա՞վ, ի վերջո կա՞ արդարություն, թե՞ չկա: Հիշում են միայն առույգ ձայնով հնչեցված կոչը մահապարտների զորագունդ ստեղծելու մասին, գունդ, որ կլինի ազգի սերուցքը: Գուցե հիշում են գիտնականների, քահանաների, ուսուցիչների ու պատգամավորների հերթերը՝ երանելի ներկապնակում խցկվելու համար: Անպայման հիշում ու մեծարում են կոչը հնչեցրած մեր մեծ խելառին: Բայց այս պատմությունը մեծ խելառի մասին չէ: Ոչ էլ՝ խաչակրաց արշավանքի մասին: Այս պատմությունը նրա մասին է, թե ինչպես կյանքի ու մահվան հարցը մի քաղցրահամ խայծ դառած գնաց ու բախեց համար այնինչ հոգեբուժարանի անհյուրընկալ դարպասը, ու թե ինչպես անհյուրընկալ դարպասից անդին աշխարհի բանից բեխաբար մեր առավել խոցելի հայրենակիցները ապշահար բացեցին բերանները ու զմայլանքով կուլ տվեցին նետված խայծը: Ուրեմն, հենց նրանք՝ Գուգոն, Սեթոն, Վարոն, Պետոն, Մամոն, Պիպոն ու Ծալիկոն: Յոթ հոգի: Կուլ տվեցին որպես մտքի մի անհավանական ճառագումով կայացրած միաձայն որոշման համեմունք:

Երդվում եմ, այդ խորհրդավոր խորհրդակցությանը, որը կարելի է իրավամբ պատմական որակել, մասնակցել եմ պատահաբար: Մասնակցել եմ անհեթեթ իրադարձությունների բերումով, մեր ժողովրդի համար մի օրհասական վայրկյանի, երբ մեր սեփական ճակատագիրը դուրս էր սպրդել մեր ձեռքից ու հանձնվել բախտի ողորմածությանը: Եթե այդ պատմական օրվանից մի ամիս առաջ նկարիչ ընկերս չցնորվեր, ու ես էլ հիվանդատես չգնայի Աղի հանքի հոգեբուժարան ու որպես թունդ ծխող չհայտնվեի ծխարանում, ակամա ականատես չէի լինի այն ահարկու գաղտնիքին, որ արդեն քառորդ դար օձա-

ռի պղպջակի նման ուռչում-ուռչում է ներսումս ու կամային մի տտիպ ճգնանքով ներծծվում: Դեռ քառորդ դար առաջ էի որոշել՝ չեմ պատմելու ծխարանի այդ հեռավոր ու մշուշապատ գաղտնիքը ոչ մեկին, նույնիսկ ամենահարազատին, մանավանդ որ թանձր ծխաձաձկույթը, որ պարուրել էր ժողովի մասնակիցներին, երբևէ դժվար էլ ցրվի: Ուզում եք կտտանքների ենթարկեք, ուզում եք մոլորեցրեք ինձ, ուզում եք գայթակղեք կյանքի զանազան վայելքներով: Չէի ուզում տղերքի անվան հետ խաղալ, չէի ուզում մարդկային հիշողության մատյաններում ոսկե տառերով սեպագրված այդ անունները պղտորել մահկանացուի ճղճիմ դատողություններով: Բայց այսօր, երբ օձառի պղպջակը պայթեց, ու պատմությունը հորդալով դուրս ժայթքեց մոռացության ծալքերից, հուսով եմ՝ տղերքն ինձ կներեն: Ու երբ ծնված պատմվածքը ինչ-որ հրաշքով հասնի ազգի ամենաերանելի բլրակի վրա ամփոփված տղերքի ականջին՝ պարզապես կհռհռան: Ճիշտ այնպես, ինչպես ժամանակին հռհռացին մահվան դառնաձոր երեսին:

- Ասում են մարտիրոսների ջոկատ են ստեղծում, չգնա՞նք կպնենք:

- Հա՛, բայց մեր անունները չեն բռնում:

- Սկզբում անունը կարևոր չի, վերջում են մարտիրոս դառնում:

- Արա՛, էս ո՞ր թիվն ա, մենք հո կամիկաձե չե՞նք, ճապոնացի չենք, սպասի մի հատ շունչ քաշենք, գուցե վիճակը հանդարտվի:

- Հետո ուշ կլինի, հողերը ձեռներիցս գնում են:

- Արա՛, դու գիժ ես, գիժը ազգություն չունի, հայ թե կիրգիզ՝ մի հաշիվ ա: Ինչ հող, ինչ բան, քո համար մեկ չի՞:

- Ոնց, էս ինչ ես ասում: Այսինքն քո ասելով, երբ վաղը-մյուս օրը բուժվենք ու դուրս գրվենք, նո՞ր միայն կդառնանք լիարժեք մարդ՝ մեր ազգությամբ, նորմալ անուն-ազգանունով, պատիվ-հարգանքով:

- Հա՛, բա չե՞ս նկատել, որ բոլորիս անունները «օ»-ով են վերջանում, հատուկ են արել, որ դեղ բաժանելուց կանչելը հեշտ լինի: Մեր իսկական անունները պահվում են չիրկիզվող պահարանում ու հենց պետք լինի՝ կհանեն:

- Փաստորեն երկու դեպքում պետք կգա՝ բուժվել-դուրս գրվելուց կամ մեռնելուց:

- Արա՛, դու գիժ չես, դու պրոֆեսոր ես:

- Պարֆեսորը ողորմածիկ տատդ ա:

Ինչպես հասկացաք, սպարապետի կոչը բեկբեկվել էր եզերքից եզերք, հասել մեր փոքր հայրենիքի ամենամոռացված ծեգերը ու հոգեբուժարանի պատը ճեղքելով լցվել գժերի գլուխը: Չեմ ուզում վիրավորել իմ գիժ հայրենակիցներին, բայց ավելի լավ բառ այս պահին չեմ կարողանում հնարել: Խելառ, խենթ, գուցե հոգեկան հիվանդ կկոչեի՝ այդ բնորոշմանը քիչ դրական երանգ-

ներ հաղորդելու մտահոգությամբ, բայց արդյո՞ք կա դրա կարիքը: Կարծում եմ՝ մարդու իրավունքների պաշտպանության ջատագովները չեն դատափետի ինձ, եթե ոչինչ էլ չփոխեմ ու պարզ ու անկեղծ շարադրանքով ասեմ՝ եղբայր, ազնիվ խոսք, ես մասնակցել եմ գժերի խոսքուզրույցին, երբ մի նկարիչ ընկերոջ տեսակցության էի գնացել: Քանի որ թունդ ծխող էի, այն ժամանակ, գնացի ծխարան, որտեղ ակամա միացա յոթ գժերի գաղտնի ժողովին: Գժերի գլխում ինչեր ասես չեն պտտվում, չեք էլ կարող պատկերացնել, ու որպեսզի չխոցվեմ անմեկնելի գլուխկոտրուկի այդ հորձանուտում, խոսակցության հետագա ընթացքը կարտաբերեմ բառացի, հենց այնպես, ինչպես որ իրականում եղել է.

- Եթե մեռնենք, հետո ի՞նչ կլինի,- հարցրեց Գուգոն:

- Հետմահու մեդալ կտան,- ասաց Սեթոն:

- Բա եթե ապրե՞նք,- շարունակեց Մամոն:

- Չեն տա: Բայց գժանոցից բաց կթողեն,- բացատրեց Սեթոն:

- Արա՛, էդ փաստորեն դաշնակների մահ կամ ազատությունն ա,- փայլատակեց Պետոն:

- Հա էլի՛, ըտենց մի բան ա դուրս գալիս,- հաստատեց Գուգոն:

- Արխային, գժին գյուլլա չի կպնում,- հույս տվեց Մամոն:

- Շեֆը պարզ ասաց, ապրել-մեռնելու հավանականությունը հիսուն-հիսուն ա,- գլուխը տմբտմբացրեց Պիպոն:

- Քո համար շեֆ չի է՛, սպարապե՛տ ա,- ուղղեց Շալիկոն:

- Էդ սպարապետը մեր գժանոցի շեֆից էլ բարձր ա, պետերի պետն ա: Էդ պաշտոնում վերջինը Վարդանն ա եղել, Մամիկոնյանը: Բայց գլուխը կերան պարսիկները: Հիմա էլ ա նույնը, էլի՝ հիսուն-հիսուն:

- Արա, հո արաղ չի, հիսուն-հիսուն ես ասում,- նախատեց Պետոն,- հայրենիք ա:

- Լավ, ինչ-որ ա, ժամանակ չունենք, ասել ա՝ վաղը չէ մյուս օրը,- միացավ Վարոն:

- Վաղը չէ մյուս օրը ի՞նչ ա լինելու,- հարցրեց Գուգոն:

- Ասում են՝ Ավարայրի ճակատամարտը պիտի լինի,- իր պատմական գիտելիքները ցուցանեց Պետոն:

- Փղեր լինելո՞ ես տեսնես,- զարմացավ Մամոն:

- Բա ո՞նց, բա առանց փիղ ի՞նչ ճակատամարտ,- հավաստեց Պետոն:

- Բա տիրացու՞,-հարցրեց Պիպոն:

- Տո, բա առանց տերտեր ի՞նչ կռիվ,- հաստատեց Գուգոն,- ափսոս, «Հայր մերը» չգիտենք, մի հատ տժժցնեինք:

- Տո, բա առանց գիժ ի՞նչ ճակատամարտ,- ծորացրեց Մամոն:

- Գիժը հիմա ասել էի ով ա հա՛,- զայրացավ վերջինը, չեմ հիշում, թե ով:

Մի խոսքով, ինչ գլուխներդ ցավեցնեմ, փախուստը կազմակերպվեց վաղը չէ մյուս օրվա նախօրեին հաջորդած գիշերը: Պետոն հիշեցրեց, թե ինչպես ֆիդայիները սավաններով փաթաթված միաձուլվեցին ձյան ճերմակին ու ուրվականների պես աննկատ ճեղքեցին Մշո առաքելոց վանքի պաշարումը: Էլ էսկողմ-էնկողմ չընկան, նույնկերպ էլ արեցին: Ապահովության համար սավանների վրա խաչեր նկարեցին: Պիպոն խմբին միացավ միայն սիրած աղջկան՝ Սաթիկին տեսակցելու պայմանով: Խումբը չմերժեց, ներքևում սպասեց Պիպոյին, մինչ գործը կվերջացներ ու երանության ժպիտը դեմքին կմիանար տղերքին: Նման օրհասական պահերին Աստված ձեռք է մեկնում, ոչինչ որ «Հայր մերը» չգիտես: Պահակը, որ նույնպես այս ընթացքում ի պաշտոնե մի քիչ ցնորվել էր, մի քիչ էլ հայրենասեր մարդ էր ու գիշերները Նժդեհի գրքերն էր պրպտում, համաձայնեց կողպեքը բաց թողնել, պայմանով, որ ամենավերջում, երբ հերոսացած հետ գան, դափնիներից իրեն բաժին հանեն կամ էլ թշնամուց խլած թզբեհ-մզբեհ բերեն՝ ի նշանավորումն հայրենիքի պաշտպանության գործում իր համեստ ավանդի: Վաղը չէ մյուս օրվա միջօրեին, երբ արեգակը թեքվեց արևմուտք ու երկնակամարի ուղեծիրն ի վար գլորվեց ցած, մահապարտների զորագունդը համալրվեց: Համալրվեց հարյուր տոկոսով: Այն հարյուր, որի հիսունը հետ չի դառնալու: Մեր փախստական յոթնյակը ստացավ վերջին յոթ ավտոմատը, թղթերն էլ չնայեցին. ժամանակ չկար: Ժամանակ չկար նաև այն ժամանակ, երբ դիակները տեղափոխելիս պարզվեց, որ ոմանց անուն-ազգանունները պարզապես բացակայում են: Ոչ ոք գլխի չընկավ, որ դրանք մնացել են այնինչ համարի հոգեբուժարանի չիրկիզվող պահարանի մեջ, զմռսվել որպես պատմության մի անբացահայտելի առեղծված: Ասում են միակը, որ փրկվել է, կիրառել է հարբած փղերի դեմ չարչրկված մարտավարությունը՝ տախտակներին մեխեր է մեխել ու փռել հարբած փղերի ոտքերի առաջ: Փղերն էլ բարեհոգի են եղել ու անցել են մերոնց կողմը: Զորագնդի ողջ մնացած մարտիկները միահամուռ վկայում են, որ մեր յոթնյակի տղերքը բոլորն էլ գժական կռվել են ու մինչև մեռնելը գժական սխրանքներ գործել: Գուգոն փորձել է տանկը իր կրծքով կանգնեցնել: Մամոն քարով թշնամու ուղղաթիռն է գցել ցած: Պիպոն բռունցքը բարձրացրել է վեր ու գոռացել՝ «Վասն Հայրենյաց», բայց չի հասցրել ասել շարունակությունը, չգիտենք էլ՝ Սաթիկին հասե՞լ է այդ վերջին բացականչությունը, թե չի հասել: Վարոն անցել է թշնամու թիկունք ու վերադարձել քառատված՝ Կարմիր խաչի գրասենյակի միջնորդությամբ իրականացված դիակների փոխանակման ծրագրի շրջանակներում: Շալիկոն բռունցքներով խփել է կրծքին ու գորիլայի մի այնպիսի ճիչ արձակել, որ խլացրել է հակառակորդի ռազմական

Կայարան գրական հանդես

կապի համակարգը ու հետո, երբ սարսափազդու դղրդոցը մարել է, «բարով է արժանացել հրեղեն գնդակի համբույրին»: Սեթոյի մասին պատմությունը լռում է: Սեթոն իր պատվավոր տեղն է գրավել անհետ կորածների երկարուձիգ ցուցակում: Միջազգային մարդասիրական իրավունքի տառին ու ոգուն համապատասխան կարծեմ հիսուն տարի հետո իրավունք կստանա գերեզման ունենալ:

Ճիշտն ասած, էսքան բանը անհայտ կմնար, եթե քսանյոթ տարի հետո սև դիմակներով ինչ-որ մարդիկ չմտնեին հոգեբուժարան ու ոլորելով թևերս՝ բոթեին ուսս.

- Արա՞, էս ուզում էիր սեյֆը լոմե՞լ:

- Ինձ ընդամենը անուններն են պետք,- կարդարանամ ես:

- Քեզ սև անուն ցույց կտանք, մի հատ փորձագետ կանչեք, թող սրան նորմալ տնտղեն: Էս կամ գիժ ա կամ շպիոն:

Այսպես, Աղի հանքի հոգեբուժարանի ծխարանում էս պատմությունն էի պատմում, երբ մի հին գիժ հարցրեց.

- Ախպե՛ր, չջոգեցի, քեզ խի են բերել ստեղ, լավ էլ խելոք խորաթա ես անում:

- Տղերքին սրբադասության էի ներկայացրել, եկեղեցին մերժեց, ասաց «Հայր մերը» չգիտեին:

- Վայ քու արա:

- Հա, բա: Բա գիտե՞ս պատերազմը ոնց են հաղթում, հո հանաք-մասխարություն չի:

Երբ պատմվածքի սկզբում երդվեցի, թե խորհրդավոր խորհրդակցությանը պատահմամբ եմ մասնակցել, իբր ցնորված նկարիչ ընկերոջս հիվանդատես այցի առիթով մատերս խաչ էի արել: Բայց մատերիս խաչն էլ չօգնեց, սրատես ընթերցողը միանգամից գլխի ընկավ, որ ես նրանցից մեկն էի՝ Գուգոն, Սեթոն, Մամոն, Պետոն, Վարոն, Պիպոն կամ Ծալիկոն: Թե ով՝ արդեն կարևոր չէ: Գուցե այն մեկը, որ պատահմամբ փրկվեց, գուցե անհետ կորածը, իսկ միգուցե՝ զոհվածներից ամենաքաջը, որ հետմահու հերոսի կոչման արժանացավ: Մի անհանգստացեք, սիրելի հայրենակիցներ, մի օր չհրկիզվող պահարանի դուռը հաստատ կբացեն, ու ամեն ինչ իր տեղը կընկնի: Պոետ Խաչիկ Մանուկյանի ասած՝ բարձունքը մերն է, տղերքը չկան, տղերքը մնացին ավելի բարձրում: Հա-հա-հա: Տղերք, ես ձեր գիժ ցավը տանեմ, պինդ բռնվեք, գալիս եմ: Վաղը չէ մյուս օրը:

ՎԱՉԱԳԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

Գյուղը, մի ոտքը նախնադարում, մյուսը՝ ատոմային ռումբի ճայնը լսած դարի կրծքին, ընդհատ-ընդհատ շնչելով, պառկել է Սևանա լճի ափին՝ դար ու քարի, արտ ու դաշտի վրա, սարերին դիպչող աստղերի տակ, հեքիաթների ու զրույցների արևների մեջ, առասպելական մի փորսուղի նման տներն առած փորի տակ: Շունչ է առնում գյուղը հերթական օրվա հանդարտ հոգսերից, հնազանդ աշխատանքից, գեղջկական կոպիտ կատակներից, օրվա ապրուստ ունենալու անտարբեր բերկրանքից ու լիզում փորի տակ ծվարած իր ճագերին: Ուշ երեկո է: Գյուղը սար ու դաշտից հոսել, եկել լցվել է տները, անասունները գոմում են, հավերը թառերին աքլորի հրամանով քնած են, մարդիկ տպավորություններն են կիսում տնեցիների հետ՝ չափազանցելով դեպքերը, մտերմաբար ձեռ առնելով մյուսներին, մտմտում վաղվա անելիքները, ամոթխած շրջանցելով սպասումներով լի գիշերը: Աշխատանքի ու քնի, կյանքի ու մահվան անջրպետի ժամն է: Հոգսերը խուրձ-խուրձ կապված են արդեն, աղոտ են հաչում մարդկանց մտքերի, խոնջության թմբիրի, աշխատանքի ծանր բավարարության մեջ: Ամբողջ օրը մարդկանց հետ քափ ու քրտինքի մեջ քայլող, արևի տակ ճենճերացող, անոթի ու ծարավ, սսկված կարոտներն ու հեշտանքի մունետիկները բախում են մթնում կորած գյուղի տների դռները, մարդկանց սրտերը, ներս մտնում: Ջուսպ, խեղդուկ, ամոթխած հառաչանքով են լցվում թոնիրների շնչից ապխտված պատերը, սպասումներով լի օդը: Ցե-

րեկը ինչքան էլ ջանք է թափել, չի կարողացել պարպել գիշերվա պարպելիքը: Քնած փոքրերը բնազդով են զգում տանը թևածող սիրո շունչը, ավելի մեծերը հասունանում են այդ շնչից: Գյուղի կենտրոնում տնամերձ հողամասով առանձնացած տունն էլ պետք է պատասխանի դուռը թակող գրգռիչ մունետիկին, սակայն տանը մարդ չկա: Քաղաք են գնացել: Տանը վարձով ապրող նորապսակ դեռատի հարսիկն է. մենակ, ամուսինը գնացել է իրենց գյուղ ու այդ գիշեր չի գալու: Նույն տան մեջ մենակ է նաև տանտիրոջ տասնհինգամյա որդին՝ Զորիկը: Երկուսով են, ու երկուսն էլ մենակ են: Սերը թակում է դուռը: Հարսիկը գիտի, որ տանը մենակ են, գիտի՝ թակողն ով է, արդեն ճանաչում է: Իսկ թաքուն մեկն էլ ներսից է սիրտը թակում ու խելքամաղ անում: Գյուղի համար անսովոր սպիտակ մաշկով, գեղեցիկ պատանի է Զորիկը: Պետք էլ չէ, որ սերը նրա դուռը թակի սերը ափեափ, պռնկեպռունկ նրա սրտում է, կիրքը հաճախ է խեղդում նրան ու գոհացում ստանում ինքն իրենից: Իսկ հարսիկը պատահաբար, մի պահ, աչքի պոչով տեսել է դա, տեսել է պատանու ինքնահարճակ կիրքը, և սարսռել են նրա մարմինն ու միտքը: Զարմացել է, նույնիսկ վատ զգացել ապշանքի չափ: Սակայն տեսածը քսվել է իրեն, ներծծվել գրգիռներում, խուտուտի նման մնացել մտքում: Եվ հիմա ինքը մենակ է, Զորիկը մենակ է, տեսածը, սերը, գիշերը, գաղտնին դուրս են ելնում իրենից, դառնում անզուսպ խանդաղատանք, աննահանջ գորով: Միտքը դուրս է քշում խուտուտը, մարմինը դուրս է քշում գրգիռը: Գորովով ուզում է տրվել պատանուն՝ մի տեսակ մեծավարի, սիրալի, մի հետաքրքիր ու արգելված բան ցույց տալու դողդոջ մղումով: Ուզում է տղայի երևակայականը դարձնել իրականություն, վայելել գեղեցիկը սիրով: Հարսիկի ամուսինը Զորիկի քիմիայի դասատուի տղան է՝ երկու ոտքից կաղ: Երբ քայլում է, ժամացույցի ճոճանակի պես ճոճվում է ծիծաղելիորեն կարճլիկ ոտքերի վրա: Հարսիկն ուզում է փարվել Զորիկի գեղեցիկ մարմնին, հանձնվել ինքն իրեն ու պատանուն, փլվել նրա գրկում, հառաչել բերկրանքից, բացել ամոթխած ազդրերի գաղտնիքը, պատանուն շոյել ու համբուրել տալ իր կուրծքը, շնչահեղձ լինել պատանու միամիտ կրքից, հալվել ինքն իր մեջ, պահել նրան իր մեջ երանավետ: Համբուրել նրա բերանը, պարանոցը, ուր պատահի, ինչպես փոքրիկ երեխային են համբուրում:

– Մեր գյուղում ես ամենասիրուն աղջիկն էի,– մտնելով Զորիկի սենյակ՝ լռությունը խզեց հարսիկը: Զորիկի մտքով չէր անցել, որ իրենց կենվորը սիրուն է: Երկար ոտքեր ուներ, մեծ աչքեր, մեծ բերան, մեծ քիթ: Դա տասնհինգամյա տղայի աչքերով էր: Իրականում հարսիկը բարձրահասակ էր, նիհար, համբուրելի շուրթերով, արևից չխանձված ճակատով, գեղեցիկ քթով ու ճմլվելու խանդաղատանքով լեցուն ստինքներով:

Զորիկի մտքում չկար կենվորի կինը. նա վեր էր իր գրգռիչ, ցանկասեր, աշխարհն իրար խառնող, հող ու ջուրը, բույսն ու կենդանին սիրելու պատ-

բաստ դարձնող, կրակի պես իրեն լափող երազներից ու իրականությունից, որոնք ստիպում էին հարձակվել ինքն իր վրա: Հարսիկը դուրս էր այդ ամենից, օրենքով դուրս էր, ահով դուրս էր, ակնածանքով ու պարտականությամբ դուրս էր: Զորիկը, ինչքան մեծ՝ մի տասն անգամ ավելի երեխա էր: Երկուսի աշխարհ մտնելու ու դուրս գալու ճանապարհ չգիտեր:

– Վախենո՜ւմ եմ,– մթան մեջ կորած գյուղի տան մենակության մեջ հանկարծ փարվելով Զորիկին, անծանոթ ձայնով ասաց հարսիկը: Փափուկ կուրծքը հպվել էր Զորիկի ուսին, ձեռքերում դող կար, սրտում դող կար, օդում դող կար:

– Ինչի՞ց ես վախենում,– հրապուրանքը տեղ չհասավ, գրգիռները չկարողացան անցնել ահի, ակնածանքի և պատասխանատվության պարսպի վրայով, բա՜րձր է պարիսպը՝ երկնահաս, սրտի արևը փակող:

– Հազար շունուգել կա,– ավելի սեղմվելով տղային՝ շշնջաց հարսիկը:

Զորիկը վախենում էր և ամաչում իր վախից: Ենչահատ դուրս թռավ գրկից, վերցրեց հոր երկփողանի հրացանը, տնից դուրս եկավ փոքրիկ տան ճակատով մեկ ձգվող բաց պատշգամբ, փամփուշտներ դրեց հրացանի մեջ ու նշան բռնելով դեպի երկինք՝ կրակեց: Իսկ երկնքում իր սիրտն էր, որ տարօրինակ բաբախում էր, որին ոչ մի կերպ չէր հասկանում ինքը:

– Տե՛ս, վախենալու բան չկա,– հիմարացած ասաց Զորիկը: Հարսիկը տաք հառաչեց ու կառչեց Զորիկի ուսից:

– Վա՜յ, լեղաճաք արիր: Կուրծքը բացվեց, վարդագույն պտուկները երկու փոքրիկ մոռ՝ սպիտակ-սպիտակ ստինքների վրա: Զորիկի մեղսավոր հոգին ծառս չեղավ, գանգուր մազերը շոյող ձեռքից դուրս պրծավ, իրեն միամիտի տեղ դրեց, թե հետո էր այդպես մտածում, անհասանելի, անհաղթահարելի տաբուն մինչև երկինք էր, մինչև հայր ու մայր, մինչև կարձլիկ ոտքերով ամուսին ու քիմիայի դասատու: Հրացանի կրակոցներից հարևաններից մի երկուսը եկան պարզելու, թե ինչն ինչոց է: Նախքան նրանց պարզելը, Զորիկն ինքը պարզեց, որ երկնքում իր սրտի վրա չէր կրակել, այլ հարսիկի: Փշուր-փշուր չէր եղել հարսիկի սիրտը, տարակուսանք էր մտել գնդակի հետ սրտի մեջ, ափսոսանք ու հիասթափություն երևի: Հարևանների գալը փախցրեց, ցիր ու ցան արեց պատրանքները, օդը հանդարտվեց, իրերը քաշվեցին իրենց մեջ, մարեցին: Զորիկը դարձավ վախեցած մի երեխա, հարսիկը՝ վարձով ապրող աղջիկ: Սերը թռավ պատի վրայով ու ձուլվեց արտերի մթանը: Հաջորդ օրը պարզվեց, որ իրար այլևս չեն տեսնելու: Հարևանները՞ն էին ամուսնուն եղածչեղած բաներ պատմել, թե՞ առանց այդ էլ պիտի գնային, պարզ չեղավ Զորիկի համար: Հաջորդ օրը նրանք հեռացան գյուղից, հեռացան Զորիկի պատանեկությունից, մնացին այնտեղ ընդմիշտ: Հազար տարի անցնի, Զորիկը չի մոռանա այդ օրը, իսկ հարսիկը անպայման կմոռանա, կմոռանա դավաճանությունը:

ԹՌՉՈՂ ԱՎՏՈԲՈՒՍԸ

Մի ավտոբուս էր թռած գնում քաղաքի վրայով, երկար, մաշված նստատեղերով մի ավտոբուս, ներկերը տեղ-տեղ թափված: Ցոլալապտերներից մեկը ջարդվել էր վաղուց, բայց պահեստամասեր չկային, որ փոխեր, իսկ փոխողը վարորդը պիտի լիներ: Սա, հոգնած նույն երթուղուց, մեխանիկորեն քշում էր ավտոբուսը: «Նաիրիտի» մոտից մտնում էր, Ավանից դուրս գալիս՝ անընդհատ քաղաքի վրա պարուրաձև պտտվելով: Ավտոբուսի մեջ կիսաքուն, հոգնած, կիսամերկ, ոտքերը չռած նստած էին տարբեր տարիքի կանայք՝ անխնամ շպարված, պոռնկատուն գնացող հին անառակների պես՝ իրենց մաշված մարմինների պես գռեհիկ կատակներ անելով: Բայց հիմնականում լուռ էին ու ձանձրացած իրենց աշխատանքից: Դրանք ավտոբուսի այն անկյունում էին նստած, որի վերևում գրված էր՝ «Մաշված երազներ»: Շատ նստատեղեր դատարկ էին. դրանց մշտական տերերը դեռ չէին վերադարձել աշխատանքից կամ մեռել էին արդեն: Պարզվում է՝ երազներն էլ են մեռնում: Ավտոբուսի վերջում քեֆ-ուրախություն էին անում մի խումբ պարիկներ, հրեշակերպեր, քիմերներ, վիուկներ, խիպիլիկներ, խաղում էին ու հրճվում: Ավտոբուսի լուսամուտներից, գույնզգույն փուչիկներ դուրս հանած, ուրախ երգում էին հրեշտակները. անգործ էին, վաղուց որևէ մեկի մոտ հյուր չէին գնում: Առաջին նստարաններին հանդիսավոր նստած էին մեռնող երազները:

– Էսօր ո՞ւմ մոտ ենք հյուր,– ձեռքերի ատամները իրար շփելով՝ հարցրեց բլոտ խաղացող չարքերից մեկը:

– Մեկը կա, ահագին գիտի իր գործը, բայց դեռ մտատանջություններ է ունենում մարդկանց վարի տալուց, անարդար որոշումներ ընդունելուց: Պիտի շուտ այցելենք, թե չէ շուտով էլ մտատանջություն չի ունենա: Կսովորի խիղճ չունենալուն, ու դրա երազարանի դուռը կփակվի: Մերկ, անասունի պես անեռազ կանցկացնի կյանքը: Եվ ավտոբուսում մի քանի տեղ էլ կդատարկվի, դրա երազներն էլ կչքվեն:

– Էսօր ի՞նչ երազ է պատվիրել մեր ծանոթ գործիչը:

– Էլի էս մաշված կնանիքն են դրան խաբելու, իրենց ջահել աղջիկների տեղ դնելու: Մի առանձին խմբով նստած էին հատուկ նշանակության երազները՝ սափրած դատարկ գլուխներով, ու զարզանդ էին տարածում շուրջբոլորը: Կուսակցական երազները վիճում էին իրար հետ, ճղճղում՝ կերակրատաշտի մոտի խոզերի նման: Գողականները սրանց ձեռ էին առնում ու փող-մող գցում, որից սրանք ավելի էին կատաղում: Հանրապետական մասշտաբի երազները պառկած էին դագաղների մեջ՝ ծաղկեպսակներով, հարգանքով պարուրված,

կարևոր ժպիտները դեմքներին: Եղկելի մի քանի երազ թափանցիկ վարագույրների հետևում շևանում էին միասեռական ճանապարհներով. վարորդը սրանց մեկ ուզում էր կարգի հրավիրել, մեկ ձեռքը թափ էր տալիս: Վայնասունով խմբից խումբ քարշ էր գալիս նվազ ու նվաստ, օրվա հացի կարոտ, իրենց մեծ բանի տեղ դնող վնգստացող երազների մի խումբ: Բոլորը դրանց տշում էին, ու վերջը էս մտավորական երազները մոտեցան թափանցիկ վարագույրին ու պառկեցին այդտեղի երազների տակ:

– Արա՜, սրա՞ն ով ա պատվիրել,– հռհռացին ավտոբուսի վերջում նստածները՝ ցույց տալով մեկին, որ ձեռքին ապակե մի քարտեզ ուներ՝ վրան ծովից ծով ու սարից սար:

– Դրա պարաշյուտը թռցրու, թող իջնելիս ջարդուփշուր լինի,– ասացին ու արեցին: Մռայլ վարորդին մոտենալով՝ դրանք ուզում էին անցնել ավտոբուսի մյուս տեղը, բայց վարորդի հայացքից պոչներն իրենց քաշեցին: – Էն մասը էրեխեքի համար է, նրանց հետ առայժմ գործ չունեք:

Իսկ մեկը շրջում էր ավտոբուսով ու կանչում.

– Հին երազ, հին կոշիկ, փոխում եմ պոպոքով, պատգամավորի մանդատով կամ էլ նախարարական աթոռով:

Կայուն գրական հանդես

ՏԱԹԵՎ ՄԱՂԱՔՅԱՆ

ՁՈՀԸ

Օրը մթնում էր, բայց հայրը դեռ տուն չէր եկել: Նարեն էլ, առիթից օգտվելով, խաղում էր բակում: Երբ հայրը տանն էր, Նարեն փակվում էր սենյակում ու դուրս չէր գալիս, դուրս գալ չէր ուզում...

Հայրը գրեթե միշտ խմած էր գալիս, հաճախ հարբած, օրորվելով, ընկնելելնելով, ու Նարեն ամաչում էր ընկերներից: Մի անգամ էլ հայրը դպրոց եկավ, ինքը զարմացավ, թե հայրը ինչպես էր գտել դասարանը: Ծնողական ժողով էր, ինքը նստած էր մոր կողքին, բացվեց դասարանի դուռը, ու հայրը գլորվեց ընկավ սենյակ: Բոլորից ամաչեց, լացը սպանեց աչքերի մեջ, վազելով հասավ ընկած հորը, փորձեց բարձրացնել, մայրն օգնության եկավ, ու մայր ու աղջիկ անխոս տարան իրենց բեռը...

Արդեն մութ էր, ու հայրն ուշանում էր, որքան էլ խմած լիներ, միշտ տուն էր գալիս, բայց հիմա չկար: Ինքը խաղից հոգնեց ու տուն մտավ: Մայրը նստել էր հիվանդ տատի ոտքերի մոտ ու մի կետի նայելով լռում էր: Մտավ իր սենյակն ու քրոջը գրկած քնեց...

Լույսը բացվեց: Տունը ոստիկաններով էր լի, կամաց բացեց սենյակի դուռը, մայրը ձեռքերը տարածած կանգնած էր աղջիկների սենյակի մոտ և թույլ չէր տալիս ներս մտնել: Քիչ հետո ինքն ու քույրը՝ մոր կողքին կանգնած, հետևում էին, թե ինչպես է նիհար, չեչոտ երեսով ոստիկանը հատ-հատ ստու-

գում իր ու քրոջ դպրոցական պայուսակները, հագուստի պահարանն ու մահճակալը...

Հորը սկզբում կասկածեցին, հետո բանտարկեցին մութ ու խառը ինչ-որ գործերի համար, ու ինքը, որ այդքան շատ էր սիրում դրսում խաղալ, արդեն երեկոները նստում էր մոր կողքին՝ տատի ոտքերի մոտ ու հայացքը մի կետի հառած՝ լռում, ինչպես մայրը... Դասարանում արդեն բոլորը քչփչում էին, որ Նարեի հայրը... որ Նարեի հորը... Ու ինքը՝ դասարանի լավ սովորողներից մեկը, կամաց-կամաց սկսեց դասերից ուշանալ, հետո՝ բացակայել, հետո՝ ընդհանրապես չհաճախել: Մայրը խնդրեց, համոզեց, որ դասերը չթողնի, բայց Նարեն որոշեց ու դպրոցը կիսատ թողեց: Գեղեցիկ էր Նարեն, մուգ սև մազերը հավաքում էր ծոծրակին ու սև սաթ աչքերը փայլեցնելով մոր հետ դաշտ գնում, ցախ բերում, հնձվորին ջուր տանում: Շատերն էին սպասում, որ Նարեն մեծանա, հարս տանեն...

Տունն անտղամարդ էր մնացել, ու ինքը մտածեց, որ մորը թև ու թիկունք է հարկավոր ու դարձավ տան համար տղամարդ, մոր համար տղա, քրոջ համար՝ հայր: Կամաց-կամաց գոմի աշխատանքները սովորեց, կամաց-կամաց սկսեց կով կթել՝ կապում էր մոր գոգնոցը, նստում էր փոքրիկ աթոռին, դույլը դնում ոտքերի արանքում ու մատների վարժ շարժումներով կաթը կթում դույլի մեջ, կամաց-կամաց սովորեց, բայց արագ-արագ մեծացավ:

Անհայր ապրելու չորրորդ ձմեռն էր, ու տանը վառելիք չկար: Տատը երկու ամիս առաջ փակեց աչքերը ու էլ չբացեց: Քույրը դպրոցը կիսատ թողեց ու հարևանի տուն հարսանիք եկած ջահելի հետ փախավ գնաց: Տանը մնացին ինքն ու մայրը: Հասակակիցներն արդեն ավարտել էին դպրոցը, ամուսնացել, սովորելու գնացել: Ինքը դեռ կով էր կթում, երկար մազերը ծոծրակին կապած, հոր ճտքավոր կոշիկները հագին խոտ հնձում, ջուր բերում, հանդ գնում: Տանը վառելիք չկար, ու ինքն առանց երկար ու բարակ մտածելու հարևան Սամսոնին խնդրեց առավոտն իրեն էլ հետը փայտ կտրելու տանել, Սամսոնը համաձայնեց: Մեքենան կանգնեց արդեն պատրաստ շարած վառելափայտի կողքին, ու Սամսոնը իրեն կարգադրեց տնից բերած ուտելիքի կապոցը հենց այդպես խոտերի վրա բացել, իսկ ինքը փայտը սկսեց բարձել մեքենան: Քիչ հետո մեքենան ճանապարհ ընկնելու պատրաստ էր, իսկ ինքն ու մոր սուրճի ընկերուհու՝ Արևի ամուսինը, խոտերի վրա նստած, հաց ու կարտոֆիլ էին ուտում: Երեկոյան կողմ տուն հասան: Տարած կացինն ու սղոցը, ինչպես տարել, այդպես էլ հետ էր բերել, բայց Սամսոնը մեքենայի բեռի կեսը իրենց բակում դատարկեց ու կամացուկ ասաց.

-Երեկոյան գոմում կսպասեմ...

Նարեն, չգիտես ինչու, ինքն իր կամքից անկախ, բացեց գոմի դուռը ու կամաց, վարանոտ քայլերով ներս մտավ: Սամսոնը բռնեց ձեռքն ու ներս քա-

շեց: Ինքը հայտնվեց տղամարդու պինդ, օղակ արած ձեռքերում, մի քանի անգամ դալար ուռենու նման ճկվեց, ճկվեց ու հանձնվեց Սամսոնի տաք ու մեղավոր համբույրներին...Դրսում մեղմ քամի էր, ներսում կովերը հանգիստ որոճում էին, Նարեն մնացել էր տաք գոմի մեջ, չոր խոտերի վրա պառկած: Ձին կամաց լիզում էր աղջկա թաց աչքերը...

Շատ անգամ Նարեն Սամսոնի հետ փայտ բերելու գնաց, և երեկոները, երբ մայրը քնած էր, գոմ մտավ, ու կամաց-կամաց Արևը դադարեց Նարեի մորը սուրճի հրավիրել, ու կամաց-կամաց հորաքույրը դադարեց քաղաքից շոր ու կոշիկ ուղարկել, ու կամաց-կամաց հարևանները սկսեցին ամեն անկյունում քչփչալ, թե Նարեն հղի է...

Մայրը լաց եղավ, հետո ապտակեց, քաշեց մազերը, խփեց գլխին, բայց... բայց երեխան ծնվեց ու անունը դրեցին Անդրանիկ: Օրերով Նարեն սպասում էր Սամսոնին՝ գոմի պատին հենված, երեխան գրկին: Սամսոնը ընտանիքը հավաքեց ու տղայի ուսումը պատճառաբանելով՝ քաղաք գնաց: Վառելափայտն էլ վերջացել էր, ու Նարեն սկսեց առավոտները փայտի գնացող մեքենա փնտրել: Շատ անգամ տնից տարած ուտելիքի կապոցը հանդում բացեց, շատ անգամ գոմ մտավ թաքուն, շատ անգամ... Հոր հագուստի գրպանից գտած ծխախոտի տուփը, որ խնամքով պահում էր, դարձավ նրա առաջին օգտագործած ծխախոտը: Մայրն արդեն քիչ աշխատում էր՝ հաճախ պառկում, բայց խաղում էր թոռան հետ՝ ախ ու վիշ անելով ժպտում: Նարեն կտրեց մազերը, առանց երկար սև սաթ մազերի էլ փայտի գնացող մեքենա ճարվում էր, գործով քաղաք գնացող մեքենա ճարվում էր, ձին նալող ճարվում էր: Կամաց-կամաց հանդը դառնում էր գոմ, գոմը՝ տուն ու ճերմակ անկողին, իսկ ամեն մեկից մնացած մի տուփ ծխախոտը՝ պատմության շարունակություն...

Գյուղում Նարեի թեման քննարկվեց, քննարկվեց ու լռեց: Շատերի համար Նարեն դարձավ առաջին աղջիկ, առաջին սեր, առաջին կին, բայց իր ու տղայի համար ոչ ոք չդարձավ հայր ու ամուսին:

...Որդին խաղում էր բակում, ինքը մի աչքով տղային էր նայում, մի աչքով՝ հարևանի «ձվից նոր դուրս եկածին», որ շրթունքները լիզելով թափառում էր իրենց գոմի կողքերին: Մտքերի մեջ ընկած վերցրեց նստարանին դրած ծխախոտը՝ վառեց, դառը ծուխը ներս քաշեց ու մատով մոտ կանչեց հարևանի տղային... Մոլոր քայլերով դուրս եկավ գոմից՝ ծխախոտը մատների արանքում սեղմած, նայեց որդու աչքերին, ու իրեն սկսեց ժպտալ Սամսոնը ... Սամսոնը.... Մի հիշոց արձակեց ատամների արանքից ու մինչ կհասներ տան դռանը, խուլ ճռնչոցով բացվեց դարպասը, ու ներս մտավ հայրը: Նարեն՝ մի կերպ ոտքերը քարշ տալով, նստեց պատի տակ կուչ եկած նստարանին ու ծխախոտի մնացորդը ոտքերի տակ տրորելով սկսեց արտասվել...



ԱՐԹՈՒՐ ՄԻԿՈՅԱՆ

ԱՐԱԳԱՅՐՈՒ, ԱՍԱ՛ ՀԱՋՈՐԴ ԲԱՌԴ

Ինչ-որ մեկն ստեղծել է բառերը, որ մենք կուլ չգնանք մեր լաբիրինթոսաձև հոգու ոլորապտույտներում: Բացվող օրվա լույսերի հետ մեր բառերը թրթիռներով համբարձվում են ձայնատնից, և հազվադեպ է պատահում, երբ կատաղությամբ, բարկությամբ չեն քերծոտում դեռևս քնաթաթախ մեր բառերի ներսն ու դուրսը: Մի օր՝ սովորական թվացող մի գիշեր, երազիս եկավ խիտ սարդոստայնի մեջ նստած դալարագեղ հրապույրով կանացի ստվերը: Նա ինձ պատմեց մի պատմություն, որի արտասովորությունից գժված՝ երազաթաղանթս ոռնալով փորձում էր պայթել:

Ստվերն ասում էր. «Բառերը միանման օրերի հոգսերով ծածկված մանրիկ, հուշիկ քայլերի ձայնաթուրմով էին հանգստանում, երբ համր մարդկանց մոլորակաբնակների առաջին ներկայացուցիչները եկան՝ փրկելու հոգեվարքի մեջ գտնվող բառերին անձաշակ մարդկանց շիզոֆրենիայից: Նրանք իրենց հատուկ սարքերն արագ լիցքավորելով բառերով, աննկատ ետ վերադարձան իրենց երկիր՝ ձեր մոլորակը թողնելով կատարյալ անբառության մեջ: Անբառ հանկարծակիությամբ սարսափած մարդիկ անօգնական ծղրտում էին: Դուք սկսեցիք նամակներով և ժեստերով միմյանց հետ խոսել այնքան ժամանակ, քանի դեռ մի այլ մոլորակում բառերն արժեզրկվեցին ու ձեր մտքի տրանզիտով ետ վերադարձան ձեզ: Խոհեմությունն անհանգստության, վախ-

կոտության թերի դատողություն չէ, այն մարդկային բնազդային խղճի ընտելացված գույնն է, որ շողարձակում է քաղցած շան աչքերում՝ ձեր կողմից ցուցաբերվող հոգատարության պահերին»։Կանացի ստվերն այդքանն ասաց, և ես նրա վերջին բառի հետ արթնացա։ Սկզբում վախեցա խոսել։ Կարծես ձայնս խնայողության ռեժիմ էր ընկել՝ հարգանքի տուրք մատուցելով երազիս խորհրդին։ Մտածում էի՝ անկարելի կլինի խոսել սրտերը կայունացնող բառապաշարով, որ սրտի կաթվածով շնչազերծվողը վերջին բառերի մեջ չդաջի անունս անեծքի խարանով։ Ուղեղումս գծագրվող տառերը բառեր էին դառնում և ցանվում դիմացիս տափաստանային դաշտում։ Ես կիսամերկ վազում էի դեպի այդ բառապատ դաշտը և թաղվում դրանց մեջ։ Ինձ թվում էր, թե բոլոր բառերը ժամադրվել են հետս, և ես դարան էի մտնում՝ թռչուն բռնելու, որ հաստատեմ իմ գոյության փաստը՝ կենսասիրությամբ լցված տարաներիցս գոնե մեկը դատարկելու նրանց մեջ։ Ես թաղվել էի բառերի մեջ, որ երբեք բառերը չլքեն ինձ, որ Սատանայի բերանի բացվելուն սպասող ճանճը թողնի իր երկարամյա սպասումները և հանգստություն գտնի իմ շուրթերի վրա։ Անեզր լեռները բառախողավակներով ներսս էին խուժում, և ես զարթնում էի հերթական իմ երազից, որ աչքերս բաց էի տեսնում։ Անկողնուցս արագ վեր կացա, հագնվեցի ու գնացի մարդաշատ հրապարակ։ Ճանապարհին անընդհատ կսմթում էի ինձ՝ ստուգելու, որ հաստատ քնած չեմ։ Հրապարակում պատահական հավաքված խմբերի հետ զրույցի մեջ էի մտնում և կասկած չունեի, որ ամեն վայրկյան հաղթում եմ անգին ժամանակին։ Ծատերն ինձ գժի տեղ էին դնում, բայց ես ուրախ էի այդքան շատ բառերի մակընթացությամբ։ Աստված եգիպտացորեն էր ցանում հրեշտակների համար, իսկ երեխաս անհայտում աննկատ մեծանում էր։ Մարդիկ հարյուր-հազարավոր բառեր մոռացել են բառարաններում՝ օգտագործելով ընդամենը մի քանի հազար բառ։ Լավ կլիներ բոլոր բառերն օգտագործեինք։ Այդ ժամանակ մենք այդքան արագ չէինք հասնի կարճատև կյանքի եզրագծին, քանզի բառերի բազմաքանակության մեջ են թաքնված հավերժության բացիլները։ Դա կլիներ շարունակական տեղաշարժ՝ տարերայնորեն ազատ անհատական հավերժությամբ։ Մտածում էի ես և որոնում իսկական նպատակից շեղված իմ ուղին՝ անհագ շփումը մարդկանց հետ։ Ոչ մի կերպ չէի կարողանում դուրս գալ երազիս ազդեցությունից, վախենում էի ընդմիշտ կորցնել բառերս։ Խրատներ էի տալիս մարդկանց խմբերին՝ բառերի անգնահատելի արժեքի մասին։ Բայց նրանք արհամարհական ծաղրանքով ինձ իրենցից վանում էին։ Դժվար է մարդկանց շեղել նախասահմանված կյանքի ստանդարտ երջանկությունից։ Բառակորուստն ինձ համար հավասարազոր էր անեության։ Ես բառն ընտելացնում էի ձայնիս, ձայնալարերիս, կոկորդիս, թոքերիս, լեզվիս, ատամներիս, շուրթե-

րիս, բերանիս: Այնքան լավ եմ ընտելացնում նրանց, որ նրանք անհասանելի զգայընկալմամբ ամենահավատարիմ բառաշների են վերածվում: Բառերը բերանիցս ամեն անգամ դուրս են գալիս թեթև կլանչոցով, հաչոցով: Եվ այդ ժամանակ բառաշներն ինձ ընդունում են որպես յուրայինի, իսկ կատուները ֆսսոցով խուսափում են ինձնից: Զգում եմ տասնյակ հազարավոր շնաբառերի հոսքն իմ ներսում և ուրախանում, որ այլևս չեմ ապրում շարունակական ձգձգման հարատևության մեջ: Այլևս շնաարքա էի, ով ցանկացած հեղձուցիչ խավարում անորոշ կետերին հենված գոհունակության ակորդներ կգտնի: Քանի՞ հազար բառաշնատեսակ ունեմ: Դեռ բազմամարդ հրապարակում եմ: Թիկունքումս՝ գետնին նստած, ծեր մարդը թզբեխը հանելով ծոցից՝ սկսեց արագ մատներով խաղացնել: Մատների արագ խաղը մի պահ օդը կագնեցրեց՝ մարդկանց շարժը ենթարկելով իր մատների ռիթմիկ համահնչունությանը: Մարդիկ սկսեցին մեծ շրջան կազմել և միմյանց ուսերի կանգնել: Կարծես «Բերդ» պարն էին ցուցադրում: Շրջանասյունը բարձրանում էր՝ 2, 3, 4, 5, 6, 7... Անհասկանալի էր՝ ինչպես են ներքևինները դիմանում այդ ահռելի ճնշմանը: Շրջանասյունն այնքան մեծացավ, որ նմանվեց մեծ երկնաքերի: Պառավն անընդհատ աղոթամրմնջում էր. «Աստվա՜ծ, տո՛ւր մեզ հողի ժպիտը»: Շրջանասյունն աստիճանաբար կորավ երկնքում՝ դատարկելով մարդկանցից ամբողջ հրապարակը: Հողը գունաթափվեց, շիկացավ ու շրջանասյունը պինդ մեխի նման խրթալով մտավ գետնի տակ՝ իր ետևից թողնելով մի անհատակ անդունդ: Ծերունին չքվեց: Չէ, էս է, անդունդի եզրին է: Վազեցի նրա մոտ: Նա ինձ տեսնելով՝ արագ թզբեխը շպրտեց բերանիս մեջ: Թզբեխը կուլ գնաց: Նա թռավ անդունդը: Նայեցի նրա գահավիժմանը: Դալարագեղ կանացի ստվերը պատին ծածանվեց. «Եթե անդունդի հատակը սպասում է մարդու հետ գրկախառնմանը, դա չի նշանակում, որ այնտեղ սերն է իշխում: Նա պարզապես միօրինականության ճանձրույթից հոգնած՝ ուզում է յուրաքանչյուր ինքնասպանի միջոցով աշխարհի թարմ պատկերները, ձայները, տրամադրությունները վերցնել: Մարդու ինքնասպանությունն անդունդի հատակի հրձվանքն է: Անդունդի հատակին վերջին շնչում գտնվող ինքնասպանը զգում է այդ հրձվանքն ու վերջին անգամ երջանկությամբ է փակում աչքերը: Մեզ ինչ կա. մեր ականջներն անսահման ձայնագրման ստուդիաներ են, աչքերը՝ տեսագրման»,- ինձ հարազատ, հանգստացնող ձայնով ասաց նա՝ ձուլվելով աչքերիս շողերի մեջ: Գլուխս ետ քաշելով անդունդից, մի կերպ կոկորդումս մարսելով իրականության աբսուրդի զգացողությունը՝ գնացի տուն: Սոված էի, եթե չուտեի շնաբառերը, արդեն շները, իրենց կլանչոցներով, կաղկանձներով այնքան կխնդրեին ինձ, որ արագ սնվելուց սիրտս կխառներ: Հետևաբար պիտի ուտեի, որ չտեսնեի փսխուքիս մեջ խեղդվող իմ սիրելի շներին:

Ես հիմա անընդհատ շփոթված եմ, որովհետև շներն իմ կուլ տված թզբեխը կրկնօրինակելով բազմացրել են և օր ու գիշեր ներսիս պատերի տակ նստած՝ ծերունաբար թաթերի մեջ խաղացնում են այն, և ես հազիվ եմ հասցնում հետևել հաճախակի փոփոխվող իրականություններիս անկանխատեսելի, խելակորույս ընթացքին:

ԹՈՒԼԱՄՏՈՒԹՅՈՒՆ

Աչքերդ փակիր և պատկրեցրու, որ չկաս: Պատկերացրու, որ մակընթաց ալիքը տեղյակ չի պահել լուսնին չարաղետ գայթակղություններիդ մասին, և ննջիր մարդկանցից հեռու՝ հսկայական լեռան բարձրության վրա: Երկնքում տպված է խեղճուկրակ ծեր էլլադայի տեսքը, որը նրա հերթական արկածախնդրությունն է, ով, ուրու դարձած, տարբեր միջոցներով ամենուր հետապնդում է ինձ: Թե երբ պիտի նրա մաշկի տակից դուրս գա առօրեական ճշմարտությունն ու հաղթի հուզագրգիռ խոհականությանը, գիտեն միայն լուսապայծառ շիթերի մեջ բնակվող կերպարանքները: Արդեն ուշ է, լեռն ինձ տուն է ուղարկում: Հալոցքային հեղեղատից մինչև աշխարհի ամենակենտրոնական մասն ավելի հեշտ կլիներ հասնել, քան համառ լռության սքանչելիքների հաղթահարումը, որով շռնդալից գիտակցությամբ փորձում է ինձ համոզել, որ բնությունն արթուն է, կենդանիները նույնպես, և այդքանով դա լռություն չէ, այլ աշխարհի նյարդային մրցավազքից դուրս մնացած մի տարածք, որ երբեք հակադրության մեջ չի դնի երկրագնդի պտույտը ոտքերիդ քայլերի հետ: Բնության գույնը բաղադրում է տունս, և ես հասկանում եմ, որ տեղ եմ հասել: Էլլադան նստած, գլխիկոր ծխում է բակում: Նրա դժգոհ ունքերի ծանրությունը հավասարազոր է աշխարհի բոլոր ջերմաշունչ հոգիների նրբագույն սիրո ներքին պահանջմունքին: Տուն մտնելուն պես նա հայացքն արագ բարձրացնում է, ծխախոտը մի կողմ է շպրտում և ներս մտնում իմ ետևից: Մենք մտնում ենք տուն, հոգնած աչքերով և հոգեզուրկ տունը հղիանում է: Տան խորը, երկարաշունչ տնքոցից առաջացած հորձանքը տան բոլոր պատուհաններին մելամաղձոտ տիկնոջ արտապատկերներ է տպում: Էլլադան վազում է, ապակիներից պոկում տիկինների արտապատկերներն ու բերանը լայն բացած՝ կուլ տալիս նրանց: Հետո վազում է, լոգասենյակի հայելու առջև կանգնում ու բերանը բաց, անձայն ծիծաղաձայնում.

«Էս ինչ ծիծաղելի տեսք ունեմ»:

Նա շոյում է երեսն ու ազատությունն անիմաստ չարաձձիությունների խցիկից դուրս է հորդում, և նրան լրտեսելուց հոգնած աչքերով մտնում եմ հյուրասենյակ և փռվում բազմոցին: Աչքերս ուզում եմ փակել, բայց էլլադան թևիցս քաշում է:

«Արի ներսուդուրս անենք, ինձ բազմաթիվ մելամաղձոտ տիկիններ են պետք»,- ասում է էլլադան ու ձեռքիցս բռնած քաշելով՝ դուրս է բերում տնից:

Սկսվում են տանջալից ժամերը: Մենք ողջ գիշեր ներսուդուրս ենք անում և, էլլադան ագահորեն ուտում է մելամաղձոտ տիկինների արտապատկերները: Լույսը բացվում է ու նա, թևերը վրաս թափահարելով՝ ինձ ուղարկում է քնելու: Աննպատակ բռնկման մեջ կիրքս հանգստացնում եմ մելամաղձոտ մի տիկնոջ ցայլքի ընդարմացնող կիսախավարով ու քուն մտնում: Արյունատար երակներս լուսափայլում են երազիս մեջ աշտարակազանգերի ձայնածություններից՝ փորձելով ղողանջալիր համբույրներ կորզել սիրահար զույգերի՝ այնտեղ եղած բոլոր ներկայություններից: Հիշողությանս ծալքերում մեկը երևակայախաղերով երազիս անցքն է փակում, ու շնչառությունս հետզհետե ծանրանալով՝ տանում է ինձ դեպի շնչահեղձություն: Կոկորդիցս երկու ձեռքով բռնած՝ շնչասպառ, վեր եմ թռչում ու նայում դիմացիս պատուհանին քամուց օրորվող ծառին: Ապակու մեջ ուժեղագույնս արտացոլվում է էլլադայի մարմնական գրավչությունը: Ճախրող ակնթարթը վայրկենապես կդադարեր, եթե չլիներ նրա մարմնական գերազանցությունը: Նա աչքերը պսպղացնելով՝ շշուկով ասում է.

«Տե՛ս, մելամաղձոտ կանանցով կերակրվելը ինչքան լավ է ազդում ինձ վրա, տե՛ս ինչքան եմ ջահելացել, սիրունացել»:

Նա քաշում է ինձ անկողնուս միջից ու դուրս տանում:

«Տե՛ս, ինչ գեղեցիկ երկինք է այսօր: Նայի՛ր գունդ-գունդ լեռներին նստած ամպերին, մանուշակագույն, նարնջակապույտ ամպաշարասյանը նայի՛ր: Երկինքը տոնում է իմ առաջին հաղթանակը ժամանակի, ծերության նկատմամբ»,- ասում է նա ու զվարթ թռչկոտում:

Այնուհետև մենք գնում ենք զբոսանքի, ու իմ մեջ ծնվում է բարձր լեռնային տեսիլանման լարերի նոտան, որ ինքնացուցադրվելու անորոշ խոշորվածությամբ՝ ճանաչում է խաղաղավետ հոգևոր ուժիս արտահեղումը՝ փիլիսոփայորեն գեղեցիկ արևի ճառագայթների հանգույն: Էլլադան հիացած՝ մարմինը շոյելով, հետս անխոս քայլում է: Հասնում ենք անտառամուտքին: Էլլադան սարսափած ետ-ետ է գնում:

«Տատս պատմում էր, որ անտառի խորությունը գողանում է կանացի մարմնի ողջ հմայքը՝ նրանից թողնելով լոկ հոգու անճաշակ մի պատյան»,- ասում է էլլադան ու ետ դառնում:

Ես քայլերս ուղղում եմ դեպի անտառի խորքը: Գրգռված միտքս ընդունակ

չէ ստեղծելու չկարդացված գրքերից արտաբերվող վախը, որ ուշ թե շուտ սպառնալու է հակադրվել բնության միասնականությանը՝ ջանալով ստեղծել իր նախընտրած ներդաշնակության իդեալը՝ հագուրդ տալով իր մեջ կուտակված, շիկացած ճնշող էներգիայի ազատ տեղաբաշխմանը: Անտառը կլանում է ինձ, և ես հայտնվում եմ կենդանական աշխարհի հոգու խորխորատում: Ներկայությունս անվերահսկելի կենդանական բնազդային հակումներին բարձրագույն բանականության կարգուկանոն է հաղորդում: Բայց ես ճանձրանում եմ կանոնակարգված բանական կենդանական աշխարհի շարժումներից և քայլերս ետ եմ ուղղում դեպի տուն: Տան ճանապարհին լույսն աստիճանաբար բարակում է՝ խոնավ գիշերվա սևաթույրով լույսերին ննջեցնելով սպիտակ գույների միապաղաղ միօրինականության մեջ: Հասնում եմ տուն: Էլլադան տան դիմաց մարզանք է անում: Ոտնաձայներս լսելով՝ շրջվում է իմ կողմն ու սկսում հանդիմանել.

«Ինչո՞ւ ես ուշանում, արագացրու՝ հետս մարզվի՛ր: Հիմա՝ 10-15 րոպեից, սկսելու ենք ներսուդուրս անելը »:

Տունը, դռները բացած, վախվորած, սպասում էր իր հերթական հղիությանը: Նորից սկսվում է գիշերային հիվանդագին ներսուդուրս անելը: Էլլադայի գեղեցկությունից, երիտասարդացումից բխող աշխատանքն իր հստակ ներշնչանքն ուներ, որն աչքերս խոշորացնում է կանացի անհագ, շլացնող լիությունից: Հոգնածությանս արատավոր շերտը մարում է նրա ինքնահավան առօրեականի տարարժեք ամբողջության մեջ, ու ես ամեն օր՝ լուսաբացին, ուժասպառ պառկում եմ քնելու: Վեց ամսվա տանջալից գիշերային ներսուդուրսից հետո (Էլլադան արդեն ոչնչով չէր տարբերվում մելամաղձոտ տիկնոջից), աշնանային մի անձրևոտ գիշեր պատուհանագոգիս նստած ճնճղուկը սիրալիր ժպտաց ինձ, և ես անձայն այո՜ ասացի նրա անբառ զգացմունքներին, որոնց վիճակված չէ ոչ մի դեպքում միտք կամ բառ դառնալ: Մտքերս ճնճղուկի զգացմունքալարով սպրդելով՝ ներսուդուրս էի անում Էլլադայի հետ և հանկարծ մի ողբագին ճիչ լսեցի լոգասենյակից: Անմիջապես վազեցի այնտեղ. Էլլադան, գամված մելամաղձոտ տիկնոջ պատկերին՝ հալվելով աստիճանաբար միաձուլվում էր նրան: Տենդագին հայացքով Էլլադան նայում էր ինձ, երբ հանկարծ պատուհանի ներսից մի ուժ դուրս շպրտեց նրան այնտեղից, և նա տան բոլոր պատահաններին խփվելով՝ միաձուլվեց մելամաղձոտ տիկինների արտապատկերներին: Աշնան խառնաշփոթ քամին շխկացնելով փակեց տան դռները և կախարդական պատրանքն ուղղակիորեն դրսից սողոսկեց տուն. ժամանակի արտացոլանքը բերանքսիվայր ընկավ պատուհանների բարակ մակերևույթների մեջ: Էլլադան իսպառ ջնջվեց, կորավ տնից: Նրա խուճապահար աղմուկը լռեց, և տիկինների բերանները, նրբափափուկ

աշնանային գիշերվա թոշնանքով շարժավորված, խոսեցին էլլադայի ձայնով.

«Ես մելամաղձոտ տիկիններ դարձա, որ հողին գամված բույսերի շուրջօրյա աներազ քունը փոխարինեմ իմ երազներով, որ սիրո ընթացքում աղոթող զույգերը երազկոտ, նյարդային, գունատ անթև մեղվի համար ինքնաթիռներ սարքեն, և երազկոտ մեղուն իր երանելի չեմպիոնական զգացումով ոգևորված՝ վերջապես հպարտանա իր հաշմանդամությամբ»:

Պատուհանաձայները լռեցին, և իմ ներսի կաղապարված մտքերը մարդու անխախտ միասնության մասին բաժանվեցին էլլադայի տրոհված մարմիններիր հանգույն:

Հ.Գ. Այդ գիշերվանից հետո ծնողական խոր սիրով լցվեցի բույսերի նկատմամբ: Այժմ, երբ ես բնության մեջ զբոսնում եմ, երբեք հողոտ, քարքարոտ, ասֆալտապատ ճանապարհներից չեմ շեղվում, որ տրորելով չարթնացնեմ իմ անուշ երազային քնի մեջ գտնվող զավակներին:

Կայարան գրական հանդես

ՎԱՐԴՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՐԿՆԱՊԱՐԳԵՎ

Ծնկշնկան հովը հուշիկ փարվում է կանաչ անտառի գանգուր վարսերին, շոյում ու փսփսում քնքուշ գաղտնիքներ՝ տարածելով խորհրդավոր մի շշունջ, իբր թե գաղտնիքներն էլ հեքիաթներ են: Անտառը լսում է ու թանձր շնչառությամբ հուշածուփ լինում՝ արտաշունչը լցնելով երկնքի աչքերը: Արևը խտղտում է որպես արթնացնող համբույր: Ամեն բան իր պտույտի մեջ է:

Այգու դռնակը ճռռաց: Արուսը, թևերը կոնքերին կոթնած, հայացքն անտառի վանքին, առավոտյան աղոթքն է մրմնջում: Ձեռքը տարավ փեշին, վեր բարձրացրեց՝ ուշիուշով նայելով շուրջը (հանկարծ ու մեկը չտեսնի փեշի բարձրանալը), և սրբեց կնճռոտված աչքերին ծվարած արցունքները.

-ՎաՆք ջան, պահապան եղիր իմ տասը բալին, զորությանդ մեռնիմ, բալեքս քաղաքում են, ոտները քարին չառնի,- հետո թափառուն աչքերը հառեց երկինք ու նայեց օրորվող ամպերին՝ նրանց մեջ կրկին որոնելով իր փամփլիկ, լողացող հուշի ամպիկը...

* * *

Արուսը տանը մենակ էր, թուլություն էր զգում, բայց շատ բան կար անելու. չի հասցնի աչք էլ թարթել, և հոգնած կգան հնձի գնացածները: Մոտեցավ խմորի տաշտին, հետ քաշեց ալրոտ ծածկոցը. խմորը հասել էր ու երե-

սին փուչիկներ տվել... «Ումո՛ւդ, ձեռդ վեր առ, էրեխեն խմորի հետ չի խաղա՝ Երուսաղեմ չի հասնի»,-լսեց թույլ, հեռվից եկող մոր հարազատ ձայնը: Հիմա մայրը չի արգելում, բայց, ավա՜ղ, ինքը չի ուզում...

Մեջքը շատ էր ցավում, նստեց ու մոտ քաշեց տաշտը: Ջահել ձեռքերի մեջ արագ-արագ կոկվում, ձև էին ստանում խմորագնդերը:

«Արուս, լավն ու վատդ դեռ չգիտես, գնդերը հավասար արա,-այս անգամ էլ քմծիծաղով հիշեց սկեսուրի բառերը,- սրանից հետո էլ միշտ դու կանես, ձեռքիդ խմորը շուտ է գալիս: Ախչի՞, հլա լսի, կարող է՞ չգիտենք, ու դու թաքնված լիրբ ես... հը՞... »:

Տրեխները փալասին հետ ու առաջ քսելով՝ տուն մտան հոգնած հնձվորները.

-Ախչի՜, էս ո՞ւր ես, ջուր բեր ձեռներս լվանք, հետն էլ թանը բեր, ծարավ մեռանք,-կանչեց Ապերը...

Արուսը երկունքի ցավերի մեջ էր: Լսելով ամուսնու ձայնը՝ գրտնակի սեղանից մի կերպ բռնվեց, վեր կացավ և քայլերն ուղղեց դեպի սենյակ: Ցավերը գնալով սաստկանում էին, բայց ինչպե՞ս օտարի մոտ ասել ամուսնուն: Փորձեց աչքերով հասկացնել, սակայն նա իր կողմ չէր նայում, բա լեռնցին ընկերոջ մոտ կնոջը կնայի՞...

Սեղանին հետզհետե շարվեցին նոր թխած բոքոնը, ապուրը, գինին...

Արուսը, հացատան մի անկյունում ծնկի իջած, տքքում էր: Երդիկից տաք մի լույս էր իջնում՝ մշուշված շամանդաղով:

-Վա՜նք ջան, զորությանդ մեռնիմ, օգնիր ազատվեմ էս ցավից, էլ չեմ դիմանում, վա՜նք ջան...

Ձայնը գնալով նվաղում էր, ցավերը՝ սաստկանում, ուզում էր բղավել, օգնություն կանչել, բայց... Քղանցքը դրեց ատամների արանքն ու նռռաց...

Երդիկից թափվող լույսը պարզեց ու ողողեց մանկան տաք մարմինը՝ տղա էր:

Արուսն ափերի մեջ առավ նրան և դողդողալով մեկնեց լույսին.

-Փա՜ռք քեզ, Տե՜ր ջան, մենակ չձգեցիր...

Հետո, գլխից քաշելով ծաղկանկար շալը, գորովանքով բարուրեց մանկանը... Պիտի վազեր տուն, կտոր, անհրաժեշտ շորեր բերեր, գոնե մի բան էլ հասկացներ: Երեխային քնքշորեն դրեց ցորենով լի ամբարի վրա.

- Էստեղ մնա, ձա՜գս, հիմի գքամ:

Սենյակում ոչ ոք նրան չնայեց, արագ կարգի բերեց սեղանն ու անցավ պատի մյուս կողմը: Վատ էր զգում, շատ էր թույլ, մարմինը ջարդրտվում էր: Օժիտի ճամպրուկից դուրս քաշեց դարս արած կտորները և արագ գնաց հացատուն:

Կայուն

-Վա՜յ, վա՜յ... հասե՞ք... մեղա՜...,- հանկարծ լսվեց Արուսի սրտաճմլիկ կանչը:

Տղամարդիկ տագնապած դուրս վազեցին և հացատան առջև ուշակորույս ընկած տեսան Արուսին:

-Ախչի Արո՞ւս, քեզ ի՞նչ եղավ, ձե՞ն հանի, մի բան ասա, Արո՜ւս,- խառնված փորձում էր ուշքի բերել Արուսին Ապերը:

Արուսը հացատանը երեխային չէր գտել, չկար, կարծես չէր էլ եղել:

***

Անցնող օրերի հետ վիշտը չէր մեղմանում, հետզհետե Արուսը դառնում էր ինքնասույզ և անտարբեր:

Մի օր հարևանուհին հանգակտուր ներս մտավ՝ ձեռքին արնաշաղախ, պատառոտված մի շալ, և, վաշ-վիշ անելով, մեկնեց Արուսին.

-Ա՛ռ, քույրիկ ջան, էս անտառում մի թփի էր կպած....

Արուսը վերցրեց գլխաշորն ու տարավ աչքերին. հոգին ճզմվեց.

-Ախր ո՞ր մեղքիս համար... ինչի՞... ա՜խ... ինչի՞... շո՞ւն էր... գե՞լ էր...

Ձմեռնամուտ է: Ձավակներին շուրջը խմբած՝ Արուսը մաշված գուլպաներ է կարկատում, հետն էլ պատմում լավ ու վատ բաներից, տեղ-տեղ չափազանցնում, տեղ-տեղ բաց թողնում: Ու այնպես է պատմում, որ զավակները չճահճանան գյուղի ավանդապաշտ ճիրաններում: Արուսի մտքում առաջադեմ քաղաքն է, երեխաների ապագան այնտեղ է: Եվ որտեղի՞ց արդյոք այդքան իմաստություն գեղջուկ ու տանջված այդ կնոջ մեջ, որը ոտքը գյուղից երբեք դուրս չի դրել:

-Մա՜մ,-կանչեց որդիներից մեկը,- լսո՞ւմ ես, դրսում կատու է մլավում, երևի անձրևի տակ է մնացել:

Արուսը մի կողմ դրեց ձեռքի կարկատանը և տարուբերվելով՝ քայլեց դեպի դուռը.

- Անտեր կատու կլինի, հիմի թրջվել է, ներս առնենք,- նա դուրս եկավ՝ ձեռքին մի կտոր հաց:- Փըս-փըս-փըս, ո՞ւր ես, ախր թրջվեցի, Է՜հ, փս-փս...

Հանկարծ ականջը երեխայի լացի ձայն ընկավ, որ գալիս էր անկյունում, ծածկի տակ դրված արկղից: Արագ մոտեցավ. արկղում բարուր էր՝ վրան երկտող.

«Արուս ջան, քեզ եմ հանձնում էրեխուս, գիտեմ՝ դու բարի ես... Ոտիդ տակի հողը լինեմ...»:

Արուսը բարուրը սեղմեց կրծքին, աչքերը շաղվեցին, որովայնում ցավ զգաց. «Երկնապարգև է»:

Անձրևը սթափեցրեց Արուսին: Բարուրը գրկած՝ նետվեց տուն.

-Էրեխեք ջան, Աստված ձեր ախպորը տուն բերավ, շան ու գիլի փայ չե-

ղավ իմ անմեղ ձագը... Մեռնեմ վանքիս զորությանը...

Գիշերը երկար թվաց: Անվերջ շուռումուռ էր գալիս անհանգիստ: Հազարավոր խառնիճաղանջ մտքեր տարուբերում էին հոգին, մեկ օրորում հանդարտ, մեկ էլ համարձակ նետում ալիքների մեջ, ուր պայքարն էր հույսը:

Մութը բարակեց այնքան, որ տեսանելի դարձան երկնամերձ սարերի սեգ կատարները: Երկնքից կախվեց ու ծորաց քնքուշ կաթնալույսը:

Անկողնուց, որ ամբարի վրա էր, ծռմռվելով զգույշ վեր կացավ: Ձեռքերը տարավ մեջքին, կարծես հենվել էր ուզում, և կիսաձայն տքքոցով բարձրացավ: Ասեղնագործ բարձի տակից դուրս քաշեց օժիտից ժառանգած ծաղկազարդ շալը, ուղղեց շորերն ու հուշիկ դուրս եկավ հին սենյակից: Ծտապել էր պետք. օրը գյուղում հյուր է:

Արուսը բացեց այգու ճռռացող դռնակը, թևերը հենեց կողքերին և հայացքը հառեց դիմացի անտառին, որ հևում էր բյուր սեր ու շշունջ առած: Թարմ օդը կլանում էր ագահորեն: Անտառի մեջ ծվարած վանքն էր՝ իր միակ գաղտնապահ բարեկամը, որ գիտեր հոգու ամեն սերն ու ցավը:

Առավոտը սովորականից գեղեցիկ էր: Վանք տանող ճանապարհին վաղորդյան ցողը մարգարտահատիկներ էր շարել: Արուսը սիրում էր բոբիկ ոտքերն առավոտ կանուխ ցողաշաղախ անել, որ քունը փախչի գնա: Այդպես էր դիպչում բնության սրտին...

Փեշով սրբեց թաց աչքերը, հետո հանդարտ իջեցրեց ձեռքը դեպի որովայնն ու թաքուն ժպտաց. «Հանկարծ ու մեկը չնկատի, տասներորդ զավակս էլ եկավ...»:

Ծուրթերին փարված անուշ ժպիտը հոսում էր սրտից: Որքա՜ն բան կար մտքերում, բայց լռել էր պետք, շուրթերը միայն դեպի ներս գնացող շշունջներ պիտի ունենան. ամեն բան զգույշ, ամեն բան՝ ներսում...

Կայուն գրական հանդես

ԳՐԻԳ

ՔԱՂԱՔԻ ՎՐԱ՝ ԹԱՆՁՐ ՄԱՌԱԽՈՒՂ

Ես հիշում եմ ոսպի հատիկները ջոկող ձեռքիդ շարժումը միայն, ձայն, ոսպի հատիկները ջոկող շարժում, ձայն, ես կուզեի նայել դեմքիդ՝ տեսնելու սերն ու մահը, բայց վախեցա, որ ո՛չ մեկը կլինի, ո՛չ՝ մյուսը, անտարբեր մատներիդ պես, ձայն, ինձ չնկատող մատներիդ պես, ձայն, ինձնից ձանձրացած ու հոգնած, ձայն, այս քաղաքի պես, ձայն, որ քո ձեռքերն է, ձայն, քաղաքը քո ձեռքերն է...

-...

-...

-...

-...

-...

Անցնում ես Դոլմամայի, հետո՝ հին, սպիտակ դռան դիմացով ու կամարով մտնում բակ, աջի վրա է, ինչպես և ասել էին, աջի վրա է, չէին ստել, աջի վրա է... Կողպեքով փակված դռան վրա գրություն կա.

ԹԵ ՓԱԿ Է
ԻՄ ԴՈՒՌԸ,
Ու ՎԱՌ Է
ԻՄ ԼՈՒՅՍԸ

ՈՒՐԵՄՆ
ԷԼ ՈՉ ՈՔ
ՊԵՏՔ ՉԷ
ԻՆՁ...

Նայում ես, դռան մոտ՝ պատշգամբի տակ, որ առաստաղ է ներքևում կանգնածի համար, աթոռ ու մոլբերտ է գլխիվայր ամրացված, նայում ես, կտավ էլ կա, նայում ես, բայց չես մտապահում, աթոռն ու մոլբերտը հիշում ես, նկարը՝ չէ, երկար նայելու դեպքում թվում է՝ դու ես գլխիվայր, ոչ թե իրերը, երկար նայելու դեպքում գլուխդ պտտվում է, ուզում ես քնել, քնելու միտքը քեզ դուր է գալիս, վստահ ես՝ երկար, շատ երկար ժամանակ է չես քնել... Կինը լվացք է փռում, քիչ հեռվում՝ անշուք տան դիմաց, կինը լվացք է փռում, ուրիշ ոչ ոք չկա, լվացք է փռում, հաստ, մերկ թևերը սահում են խոնավ օդի մեջ, հաստ, ջլուտ թևերը.

-Կներեք, մի բան հարցնեմ, էստեղ հիմա ապրող կա՞:- Ցույց տալով դուռը՝ ասում ես:

-Ջահել տղա ես, ափսոս չե՞ս:- Ձայրանում է:

-Ուղղակի հետաքրքիր էր:

- Ստում ես:

-Չեմ հասկանում՝ ձեզ ինչ ա եղել, ամեն օր մեկը գալիս ա, նայում ես՝ սիրուն հագնված, տեսքը տեղը, բայց աչքերում կյանք չկա:

-Ուզում էի ճշտել:

- Ստում ես:

-...

-...

-...

-...

Կինը լվացք է փռում ու քեզ չի նկատում, թևերի շարժումները զայրանում են վրադ, լվացք է փռում ու թիկունքում կառուցվող շենքը ավելի է մեծանում, իսկ իր տունը խեղճանում է, ավելի է խեղճանում.

-...

-...

-...

-...

Վերադառնալով դռան մոտ՝ նորից կարդում ես գրությունը, հետո փայտե կանաչ սանդուղքով անշտապ բարձրանում երկրորդ հարկ, պատին գրված է.

ՄԻ ՏԱՐԱ,
ԻՆՉ ՈՒՁՈՒՄ ԵՍ՝ ԱՐԱ,

ՈՒԶՈՒՄ ԵՄ՝
ՄՆԱ,
ՈՒԶՈՒՄ ԵՄ՝
ԳՆԱ...

Ինչպես ասել էին, երկրորդ գրությունն է, չէին ստել, մնաց վերջինը, մնում է վերջինը... Նայում ես, նայում ես կոտրված ապակիով լուսամուտից, փորձում ես աննկատ մնալ, կինը լվացք է փռում, չես ուզում, որ քեզ տեսնի, լվացք է փռում, նույնն ես անում, դու միշտ նույնն ես արել, միշտ նայել ես հեռվից, միշտ նայողի դերում ես եղել... Սենյակները հաջորդում են միմյանց, շատ չեն, բայց շատ են թվում, ահա այն, պատի վրա մեծ-մեծ տառերով գրված է.

ԴՈՒ
ԻՆՔԴ
ՊԻՏԻ ՈՐՈՇԵՍ՝
ԹԵ
ԵՐԲ ԳՆԱԼ
ԵՎ
ՈՐՏԵՂ ԴԱՌՆԱԼ
ՄԱՌԱԽՈՒՂ...

Դուրս ես գալիս, կինը դեռ լվացք է փռում.

-Կներեք, մի բան հարցնեմ, տանը ապրող կա՞:- Ցույց տալով դուռը՝ ասում ես:

-Ջահել տղա ես, ափսոս չե՞ս:- Զայրանում է:

-...

-...

-...

Բառ առ բառ կրկնում է այն, ինչ արդեն ասել է, կինը քեզ չի ճանաչում, հիմա ոչ ոք քեզ չի ճանաչում, ինչպես և ասել էին, հիմա դու այլևս ոչ մի պարտավորություն չունես, չէին ստել, հիմա դու չկաս քաղաքում, հիմա հանգիստ սրտով կարող ես անել այն, ինչի համար այսքան երկար պատրաստվել ես, միտք, որ սիրած մեղեդու պես անվերջ պտտվում է գլխումդ ու դուրս չի գալիս... Ոչ ոք արցունք չի թափելու... Ոչ ոք չի հիշելու... Բեռը թոթափված է... Քեզ մնում է անել նախավերջին քայլը, իսկ վերջինը կանի ձգողությունը երկրի...

ՁԵՍԱՀ

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ
(հատված վեպից)

Փիքոք թատրոնի բեմահարթակը դատարկ էր: Սրահում գտնվող ուսանողները նույնպես լքում էին տարածքը՝ միանալով միջանցքում գտնվողներին: Առանց հապաղելու տեղիցդ բարձրացար, հատակին դրված պայուսակդ գցեցիր ուսերիդ և հետևեցիր մնացածին: Բոլորն ասես իրար ծանոթ էին, կամ էլ համատարած ժպիտն էր այդպես ենթադրելու առիթ տալիս: Դու ակամա տարբերվում էիր: Մի ծայրից մյուսն էիր գնում, որ ինչ-որ խոսակցություն որսայիր՝ հասկանալու համար թե այդ խմբավորումներից, որ մեկին ես պատկանում, ովքեր են կուրսեցիներդ: Չստացվեց: Ձրույցները կամ շրջանցած էին լինում ծանոթության բաղադրիչը, կամ էլ ընդհանրապես իրար ճանաչելու կարիք չկար. արդեն միմյանց գիտեին: Դու էլ քո հերթին առաջանում էիր անկանոն ուղեգծով, ինչը որոշ հստակություն ձեռք բերեց, երբ ծանոթ մեկի տեսար: Հանան էր, որն ինչքան էլ քեզ չհետաքրքրեր, ձեր հարկի միակ աղջիկն էր: Նրա դեմքը շատ հասարակ էր՝ չտպավորող, իսկ քո հայացքը, անթաքույց կերպով, փաստն արձանագրողի դերում էր հանդես գալիս: Երևի թե հայացքների նման փոխհարաբերությունն էր պատճառը, որ ձեր աչքերը ընդհանուր գիծ հազվադեպ էին միավորում:

Ծանոթների հետ էր զրուցում, երբ միմյանց նկատեցիք: Ընդհանուր տրա-

մադրությունից ու մթնոլորտից վարակված շուրթերդ ժպիտ ուրվագծեցին: Գլխով անելուց հետո պատասխան շարժում ստացար: Մեխանիկորեն քայլերդ իր կողմն ուղղեցիր, բայց նրան հասնելով՝ բավարար ուշադրության չարժանացար, ինչը քեզ կստիպեր քայլերդ դանդաղեցնելով միանալ քննարկմանը: Դու էլ արդեն մտածում էիր, թե ինչպես ես ներկայանալու, ծանոթանալիս ասելու ես՝ քեզ հաճելի է, թե՞ ուղղակի լայն կժպտաս, կզրուցես Հանայի հետ, թե՞ աչքով անելով կհասկացնես, որ երեկոյան, միևնույն է, տեսնվելու եք: Սակայն, երբ ձեր միջև եղած հեռավորությունը կրճատված էր այնքան, որ նա պետք է արդեն քո կողմ պտտվեր՝ Հանան իր բարձր ծիծաղով հաղորդեց, որ նման մտադրություն չունի, իսկ դու ճանապարհդ շարունակեցիր այնպես, ասես ի սկզբանե այդ կողմ էիր գնում: Ժպիտդ էլ թողեցիր անփոփոխ, որը հաստատում էր անհարմարության զգացումի բացակայությունը: Առաջանալուց հետո ելքի դռանը հասար, ու քեզ մնում էր միայն շենքից դուրս գալը, իբր այդպես էլ պլանավորված էր:

Համալսարանական ճամբարը թատրոնի անմիջական հարևանությամբ էր գտնվում: Պայուսակները ուսերին գցած ուսանողները այս ու այն կողմ էին շտապում: Թվում է, թե սա հասարակ տեսարանի նկարագրություն է, բայց այն քեզ համար այդպիսին չէր, այլ անտանելի մի դրվագ էր: Մտածում էիր, թե ինչ-որ բանից հետո ես ընկնում: Բոլորը գնալու կամ շտապելու տեղ ունեն, իսկ դու՝ ոչ: Հեսա մյուսները արագ-արագ կսովորեն, կավարտեն, իսկ դու այդպես էլ տեղդ կանգնած կմնաս: Հետ ես մնում, ամեն ինչից հետ ես մնում: Քո քառասունհինգ րոպեանոց ուղևորությունը, այն էլ անշտապ քայլերով, ամենևին չի համապատասխանում լոնդոնյան ռիթմին: Մարդիկ մետրո են նստում, երկհարկանի ավտոբուս, հեծանիվ են վարում կամ գոնե շտապում են, իսկ դու օրվա մեջ առնվազն ժամ ու կես կոշիկ մաշեցնելուն ես տրամադրում:

Վերելակն անտեսելով՝ հինգ հարկ ցած ես իջնում, դանդաղ անցնում ես Սիդնի Ուեբի բակով, աչքի տակով համակարգչային սենյակում գտնվողներին ես նայում, որոնք հայացքները պատուհանի մյուս կողմն ուղղելու փոխարեն համակարգչի էկրանին են հատկացնում, Գրեյթ Դովեր դուրս գալուց ոչ թե մյուսների նման ձախ ես գնում, որոնք կամ մետրոյի, կամ էլ երթուղայինի կանգառի կողմ են շարժվում, այլ ուղիղ գծով համալսարան ես առաջանում: Հասնելով Թրինիթի սթրիթ՝ քայլերդ՝ ծակծկոցներով պայմանավորված, էլ ավելի ես դանդաղեցնում: Այսքանը դեռ բավարար չէ, բոլոր կարմիր լույսերի տակ կանգնում ես՝ անգամ եթե մեքենա չի անցնում: Ուոթերլուի վրա Թեմզայով ես տարվում, իսկ համալսարան հասնելուն պես միակն ես, ով չի շտապում: Իհարկե, քեզ էլ էր այս հարցը հետաքրքրում, այլապես չէիր գնա սոցիոլոգիայի ֆակուլտետ ու հարցվդ ծիծաղեցնեիր աշխատակիցներին:

Ամբողջ համալսարանական ճամբարում Սենթ Քլեմենթսի մասնաճյուղը ամենից անշուքն էր: Առաջին հարկում մի գրադարան կար, որտեղ հիմնականում մարդ չէր լինում: Այդտեղ անցուդարձ նկատվեց միայն հաջորդ տարի, երբ ուսանողության շրջանում խիստ տարածվեց «Աստվածային ոտնաչափ հեռու» գիրքը: Սոցիոլոգիայի ֆակուլտետ մտնելիս դու մի քանի քայլ այն կողմ չնկատեցիր դասախոսներից մեկի սենյակը, որտեղ օրեր անց քննարկելու էիր դիսերտացիայիդ թեման: Ներս մտնելով՝ դու կտեղավորվեիր աթոռին ու շուրջդ կզննեիր, մինչև ատենախոսությանդ ղեկավարը գործերը կավարտեր: Գրապահարանում, մասնագիտականից բացի, Իռլանդիայի մասին գրքեր էին՝ «Իռլանդիայի սփյուռքը», «Իռլանդացիները», «Իռլանդական հրաշքը», «Դուբլինցիները» և այլն: Նա քո տեսած առաջին իռլանդացին էր, իսկ դու նրա հարյուրավոր ուսանողներից մեկը: Նա քեզ շուտով կմոռանար, իսկ դու նրան դեռ երկար էիր հիշելու, հիշելու էիր միանշանակ, ինչպե՞ս կարող էիր մտքիցդ ջնջել նրան, ով հիմարության վերագրեց քո գաղափարը, այն է՝ հիմար անվանեց քեզ:

Ոտքդ համալսարանական կյանք դեռ նոր դրած, արդեն ուզում էիր ակադեմիական գրականություն մուտք գործել, տեղավորվել քեզ համար նոր դաշտում, ու դեռ բավարար չէ, մի հատ էլ կենտրոնական դիրք զբաղեցնել՝ լինել քննարկված կամ անքննելի. կապ չունի թե որը, միայն թե մեկը լիներ: Դիսերտացիայիդ թեման ճանապարհ էր դեպի մեկը կամ մյուսը, ու դու արդեն քեզ էիր պատկերացնում այդ ուղին անցնելիս, որը բարդ էր ու երանելի, որտեղ դժվարությունները միայն հաջողության բազմապատկիչներն էին, ինչի կածանները նեղ էին, բայց անցանելի՝ հաղթահարելի՝ միայն քեզ համար, քանի որ ոչ ոք այդտեղ չէր եղել: Դու Լոնդոն էիր եկել քեզ փորձելու, մի բան անելու, գաղափարդ կյանքի կոչելու համար ու մի պահ նայելով իռլանդացուն՝ կարծեցիր, թե դեմքին նշմարող հանգստությունը նախերգանքն է լինելու այն խանդավառության, որը, քեզ հետ կիսելով, ազդարարելու է անցնելիք ուղուդ մեկնարկը: Դա լռության տեսակ էր, որը նախորդում է անձրևին, կարկուտին կամ փոթորկին: Այդ լռությունն ասես ձեր հանդիպման ժամանակ նույն դերակատարումն ուներ: Այդպիսի դեպքերում այն խորհրդավորություն գեներացնելու հատկություն ունի. ասելիքդ մտքում ունենալով՝ ուշադրության, փայլող աչքերի, ցասումնական սպասումի միախառնման հավաքակոչից հետո, լռությունն անցյալ դարձնելով, այդ ամբարված խորհրդավորությունը փոխակերպում ես ձայնով, որն էլ, սովորաբար, իր զրնգուն արձագանքն է գտնում հասցեատիրոջ գիտակցության մեջ: Անժամկետ ու անկանոն զրնգոց, որի ամենակուլ ղողանջը գիտակցությունդ իր մեջ առնելով, մենակ է մնում քեզ առերես: Դու և զրնգոցը, դու և «հիմարությունը», որը երկար դադարից հետո, իռլանդա-

Կայուն

կան ակցենտով զուգավորված՝ ընդմիջեց խորհրդավոր լռությունը: «Հիմարություն» ու եռաստիճան արձագանք, ղողանջներ, որ միտքդ սրբելով կուլ էին տվել նաև Բրիքլեյերս Արմ կայարանի հայտարարությունը, որը բաց թողնելով, մենակ էիր մնացել երբեմնի խորհրդավոր լռության հետ, ինչը վերարտադրվելով կարող էր նոր ճանապարհի մեկնարկ ազդարարել, սակայն այլ կերպարանք ստացավ:

Դու, Լոնդոն գալով, երկար ճանապարհ էիր անցել, որ նոր ուղի սկսես, բայց ստիպված էիր հանրակացարանիդ սենյակ վերադառնալ, քանի որ քո միտքը հիմարություն էր: Այո՛, աշխարհը քո շուրջը չէր պտտվում, ինչը վկայում էր նաև դաբըլդեքքերի վարորդի և ուղևորների լռությունը, որոնք քեզ չհիշեցրին բաց թողնված կայարանիդ մասին: Ամպամած Լոնդոն, ցած նայող աչքեր, «հիմարության» եռաստիճան արձագանք:

Անդադար անձրևում էր, նախորդ օրերի արևոտ եղանակի տեղը հանելով, որի լուսացնող ճառագայթները քեզ էին ուղեկցում, երբ Փիքոքից շարժվեցիր դեպի Սենթ Քլեմենթս: Արևից ճմռթված աչքերդ դեռ նոր էին վերականգնվել, երբ շրջանցելով իռլանդացու սենյակը, մտար սոցիոլոգիայի ֆակուլտետ: «Բոլորն այս ու այն կողմ են վազում, համակարգիչները ծնկներին, խոտերի մեջ պառկած, ստեղնաշարերով չգիտես թե ինչ են տպում: Պարապ մարդ չկա, բացի ինձնից: Հնարավո՞ր է արդյոք, որ ես ինչ-որ բանից հետ եմ ընկնում». ֆակուլտետի աշխատակցի դեմքը, եթե հարցիցդ հետո ծիծաղով չպատվեր, դու մի քանի օր անց կնմանեցնեիր այն արձանիկին, որը տեսնելու համար՝ իռլանդացու սենյակից դուրս գալուց հետո, կայցելեիր Բրիտանական թանգարան:

Դռան բռնակը իր սառնությունը հեշտությամբ փոխանցեց ձեռքիդ: Միջանցքում դող զգացիր, ու արդեն երկու ափերդ սառցակալել էին: Աստիճաններին մոտենալով՝ վերարկուիդ գրպանից հանած ձեռնոցներդ հագար, որոնց մակերեսը շուտով ելքի դռանը տարածելով, հայտնվեցիր Սենթ Քլեմենթսից դուրս: Ի տարբերություն անձրևի տակ վազող ուսանողության, դու պայուսակիդ մեջ անձրևանոց ունեիր, որն էլ գործածելով ճանապարհվեցիր դեպի Բրիտանական թանգարան: Քինգսուեյ Սթրիթի վրա ամեն ինչ նույնն էր՝ կարմիր հեռախոսախցեր, անգույն շենքեր, ամեն հնարավոր բանին ամրակցված հեծանիվներ ու երկհարկ ավտոբուսների բարձրությանը հարմարվող ծառեր: Քայլեր հետո քեզ դիմավորեց Հոլբորն Սթեյշընը: Կայարանի նախամուտքում անձրևից պատսպարվող անցորդներն էին տեղավորվել, որոնք առիթից օգտվելով, ունկնդրում էին փողոցային երաժշտի կատարումը: Նա այդտեղ, իր ճղճղված հագուստով ավելի լավ էր երգում քան նրանք, ովքեր այդպիսի ձայն ունենալու դեպքում անասելի ճանաչման էին դատապարտված

այնտեղ, որտեղից որ դու եկել էիր: Մի տեղ նա փող մուրող էր, իսկ մյուս տեղում հանրահայտ երգիչ կարող էր լինել, իսկ դու ոչ այնտեղ մարդ դարձար, ոչ էլ այստեղ էիր բանի պետք՝ քո հիմար մտքերով հանդերձ:

Կենտրոնական փողոցների միատեսակ, բայց հեռահմա շենքերը անձրևի պատճառով էլ ավելի էին նույնացել: Մի քանի անգամ խամրելով՝ իրարից կարող էին տարբերվել միայն բարձրությամբ, իսկ նրանց հիմնականում նույն հեռավորությունն էր բաժանում երկնքից: Սաութհեմփտոն Ռոուդում առաջընթացը դժվար արձանագրելի է, քանի որ ճանապարհին պատահող շենքերի կրկնությունը ասես քեզ հետ է տանում այնտեղ, որտեղից որ գալիս ես: Փողոցի ավարտը խաչմերուկ հասնելով էիր տեսնում և նորից «նույն» փողոցը՝ այլ տարածական հարթության վրա և այլ անվանմամբ: Բլամսբըրին այն փողոցներից էր, որ այգի ուներ: Հնարավոր է վառ կանաչը քեզ իր կողմը կանչեր, եթե վանող արձանը չլիներ. մեկը աթոռին նստած փորն էր առաջ ցցել ու այնպես էր վրադ նայում, կարծես քո այնտեղ լինելը կամ պատահականություն է, կամ էլ մեկի թերացումը, ով թողել էր, որ բանը դրան հասներ: Այնուամենայնիվ, դու այնտեղ էիր, քայլում էիր դեպի թանգարան, որի հելլենիստական սյուները դու նկատեցիր պարսպի ճաղերից: Սև, բարձր ճաղեր, որոնք զգոնություն էին հաղորդում դեմքիդ, նախքան հայացքդ էլ ավելի կերկարեիր սպիտակ շինության կողմը:

Պահակակետի զիգզագաձև ճանապարհը անցնելուց, պայուսակիդ պարունակությունը դատարկելուց, վերարկուն ձեռքդ բռնելուց հետո մուտք գործեցիր Բրիտանական թանգարան, որտեղ հին աշխարհի պատմությունը տեղավորվում է մեկ հարկի տակ՝ Հին Եգիպտոս, Հռոմ, Ասորեստան, Բյուզանդիա: Թանգարանի զգալի մասը բաժին է հասնում մեծ խաղացողներին, իսկ մյուսների համար փոքրիկ տաղավարներ են նախատեսված: Հետաքրքիր բան է ժամանակը. մեկ ընդհանուր ժամանակահատվածից ոչ բոլորն են կարողանում օգտվել, ու կախված նրանից, թե ինչպես այն կտնօրինես՝ կա՛մ դու կանմահանաս, կա՛մ էլ կկորչես հիշողությունների շտեմարանից: Բայց ամենից հետաքրքիրն այն է, որ գրեթե բոլորին հավասար մեկնարկի հնարավորություն է տրված: Մ՛յ, տե՛ս, օրինակ՝ Բրիտանական թանգարանը. հավասար սկիզբ, մեկ ընդհանուր ժամանակահատված: Ով կարողացել է՝ թանգարանի հրապարակն է զավթել, ով փոքր-ինչ թերացել է՝ տաղավարն է իրենով արել, իսկ մյուսները ժամանակի մեջ չտեղավորվելով, ընդհանրապես ճախողել են:

Ձեր կողմերից միայն մի դիցուհի էր հայտնվել այնտեղ, ում սխրագործության մասին, այն է՝ հայտնվել Բրիտանական թանգարանում, դու առաջին անգամ իմացել էիր պատմության դպրոցական դասագիրքը թերթելով: Արձանիկի նկարն էր պատկերված, որն այդքան աչքի չէր զարնի, եթե նշված

Կայուն գրական հանդես

չլիներ գտնվելու վայրը: Նա քեզ էր սպասում, մինչ դու ճշտում էին նրա տեղակայվածությունը: Ծուտով դուք հանդիպեցիք: Դիցուհին վաղուց էր քեզանում ապրում, իսկ նա քեզ հիշելու էր այնքան, ինչքան որ կարոտած աչքերդ իրեն կուղղեիր: Հետո իսկույն քեզ կմոռանար, կմոռանար Սիդնի Ուեբի, Սենթ Քլեմենթսի, իռլանդացու, Թեմզայի, Ծարդի, Լոնդոնի ու մյուսների նման: Սակայն դու քո տեղն էիր ուզում դրանց հիշողություններում, քո տաղավարն էիր ուզում, լուսամփոփի լույսն էիր ուզում ճակատիդ, փորագրած անունդ էլ վատ չէր լինի, բայց ոչ դպրոցական սեղանի վրա, այլ այնտեղ, որտեղ դու չէիր մոռացվի, այնտեղ, որտեղ դու կշարունակեիր ապրել քեզնից հետո:

Հանկարծ նրա անշարժ դեմքը անձնատուր եղավ զգացմունքներիդ: Ծուրթերի ուրվագիծը ընդլայնվելով՝ ժպիտ գծագրեց քարացած երեսին, իսկ բերանից դուրս ծորող խոսքերը քեզ հանդարտեցնելուն էին միտված, ինչի կարիքը դու մեծապես ունեիր: Նրա խոսքերից հետո այլևս անելիք չունեիր այնտեղ: Դեպի ելք շարժվելով՝ նշում արեցիր, որ մոտակա օրերին հանդիպում պետք է ունենաս դասախոսներից մեկի հետ, իսկ այն, որ դասերդ մյուս օրն էին սկսվելու՝ դու առանց նրա ասելու էլ գիտեիր: Գրառումդ անելուն պես թուլություն զգացիր. գլուխդ էր պտտվում: Լավ է՝ մոտակայքում լվացարան կար, որտեղ էլ գլուխդ սառը ջրով շփեցիր: Բայց այդքանը բավարար չէր: Հետ տալ էիր ուզում: Ջուգարանի խցիկը բաց արիր թե չէ՝ մեջիցդ ինչ կար-չկար դուրս հանեցիր: Լորձանման հեղուկը, որին ջուրը քշեց-տարավ, երևի ճվաձեղի մնացուկներն էին: Նորից լվացարանի դիմացն էիր: Հայելու պատկերի մեջ նոր էին միայն աչքերիդ տակի փոսերը, երեսիդ դեղնության հետ միասին: Բերանդ մի քանի անգամ ողողելուց հետո որոշեցիր դուրս գալ այդտեղից: Չստացվեց: Անձրևանոցիդ պոչը, դռան արանքը մնալով, քեզ հետ պահեց: Այնուհետև առաջանալով՝ շուրջդ նայեցիր՝ հասկանալու համար՝ տեսնողներ կային թե՞ ոչ: Կային՝ շատ չէ, բայց կային: Դու էլ ի պատասխան ժպտացիր, ասես սովորական բան է, անցավ գնաց, բայց շենքը լքելիս՝ թունդ հայհոյեցիր: Հայհոյեցիր բոլորին:

Սենթ Քլեմենթսը մեջքիդ ետևում թողնելով՝ մտար Օլդ Բիլդինգ, որ շրջանցես Փիքոք թատրոնը: Հիմնական մասնաշենքից դուրս եկար ու քայլերդ ուղղեցիր դեպի Գարրիքս սրճարան՝ ուսանողների սիրելի վայրը կամ բավականին մատչելի մի կաֆե: Միայն զովացուցից ըմպելիք վերցրեցիր, որ քիմքիդ համը փոխես ու տեղավորվեցիր պատուհանին կպած սեղանի առջև: Հայացքդ Քինգսուեյ Սթրիթ ուղղելով՝ մտքերդ տվիր ինքնահոսի: Վերհիշեցիր անցկացրած օրդ, առավոտվա ցուրտը, անկողին հավաքելդ, բաց թողնված զանգերը, խոհանոցը, Մունային, ճվաձեղը, Գրեյթ Դովերը, լրբիդ, Թեմզան, Թոմին ու Հանային՝ էս երկուսը արդեն քեզ համար մեկ էին դարձել, Փիքո-

քը, ընկնող ձեղնաջահը, Սենթ Քլեմենթսը ու կրկին այդ ձվածեղը, որը նորից տհաճություն պատճառեց քեզ: Գլուխդ ցած իջեցրիր: Սեղանին խմիչքդ էր ու դրա կտրոնը: Համարյա երկու ֆունտ արժեր, որը քեզ համար այդքան էլ մատչելի չէր: Որոշեցիր օրական տասը ֆունտից ավելի չծախսել, որ բյուջեի մեջ տեղավորվես: Հնարավորության դեպքում, տասից քիչ կամ ընդհանրապես չծախսելը քեզ լավ տնտեսելու գումար կթողներ, ու դու ամսվա մեջ մի երկու անգամ կարող էիր ուզածիդ չափ ծախսել՝ գնալ ակումբներ, չմերժեիր խնջույքների առաջարկները, ու ժամանակ անցկացնեիր կուրսեցիներիդ հետ, որոնց դեռ չէիր էլ ճանաչում: Մի խոսքով, որոշվեց: Տասը ֆունտը չես գերազանցում, իսկ այդ օրվա համար երկուսն արդեն ծախսել էիր: Հիմա ի՞նչ, խնջույքի գնալուց ութից ավելի ծախսելու տեղ չունեիր, թե՞ շռայլություն թույլ տալու օրն էր լինելու: Չգիտեիր էլ, թե ինչ տիպի հավաք է լինելու, որտեղ և ում հետ, միայն գիտեիր, որ տասը րոպեից Մաքսին ես տեսնելու Քինգսուեյի վրա: Նայեցիր ժամին, դատարկեցիր զովացուցիչի շիշը, պայուսակդ գցեցիր ուսերիդ ու դեպի Քինգսուեյ, Մաքս ու խնջույք: Սակայն, նախքան դու երեք կետերը միացնելով, այս եռանկյունին կգծեիր ու կքայլեիր Մաքսի ուղղությամբ՝ սրտխառնոցն էլ քեզ էր ընդառաջ գալիս:

Կայարան գրական հանդես

ՊԵՐՃՈՒՀԻ ԱՒԵՏԵԱՆ

ԻՆՔՆԱԶՆՆՈՒՄ

Ինքնազննումը երբ կը դառնայ սովորութիւն՝ վատ երեւոյթ է...

Վերջերս չեմ գիտեր՝ ինչպէս ես ալ վարակուեցայ նման ախտով.

Ձեռքերս առաջ մեկնած աջն ու ձախը իրար մօտեցնելով՝ յաճախ կը զննեմ: Աջ ձեռքս զգալիօրէն տարբեր է ձախէն, աւելի մեծ, մատներս աւելի հաստ ու կոշտացած, եւ ամենավատը՝ նուազ աշխատունակ:

Դաստակիս կոտրուածքը ապաքինուած է, այդպէս ցոյց տուաւ շողանկարը, ես կը կարծեմ ոչ լրիւ... իսկ ո՞ր կոտրուածը դիւրաւ կը նորոգուի:

Իսկ ինչո՞ւ վատ սովորութիւն անուանել ինքնազննումը, ոչ դրացիին ունեցածին աչք տնկել է, զորս մարդիկ կը համարեն «պարզունակ հետաքրքրութիւն». ոչ ապօրինի առեւտուր՝ «աչք բացութիւն», ոչ բամբասանք՝ «ժամանց ու զբաղում»:

Լուռ ու մունջ նստած կը մեկնեմ ձեռքերս, տարբեր են իրարմէ, զգալիօրէն տարբեր... ճարահատ որեւէ լուծում գտնելէ, տրամադրութիւնս խանգարող տխուր, նեղացուցիչ մտքերը ցրելու համար կը սեղմեմ հեռատեսիլի կոճակը:

Պաստառը կը փայլփլի, տարօրինակ սանտրուածքով խօսնակն է, որ

սիրուն, շիկահեր խօսնակուհիէն աւելի... ուշագրաւ է, պէտք է ընդունիլ, որ ուշագրաւութիւնը յաճախ գեղեցկութեամբ չէ:

Ուրեմն ինքն է... կը յիշեմ, հեռատեսիլի նոր ծրագրերու եւ խօսնակներու մասին նիւթի մը թափթփուկները դպած էին ականջիս... «այսինչ կայանի նոր խօսնակը կէյ է եղեր», անտարակոյս այս տղան է, ծեփծեփուկ, իգավայել առոգանութիւն...

Եւրոմիութեան հետ քայլ պահելու մարմաջն է, յառաջխաղացում մարդկային իրաւունքները յարգելու, համարձակ ոստումով միասեռականները փառաւորելով, անոնց արժանավայել դիրք ու աշխատանք տրամադրելու:

Վերջերս նշանաւոր (սփիւռքահայ) հայազգի դերասանուհի մը կը մատնանշէր, թէ յուսախաբութիւն ապրած է Հայաստանի մէջ միասեռականներու իրաւունքներուն անտեսումը տեսնելով կամ լսելով... Սա արդէն իսկական յետամնացութիւն է Եւրամիութեան անդամ ըլլալու պատիւը՝ հազար ու մի զիջումներով ստացած փոքրիկ մեր երկրին հաշւոյն արձանագրուող. այնպիսի յետամնացութիւն... որ կը գերազանցէ չոր հացի կարօտ թոշակառուներու մարդավայել ապրելու իրաւունքը, գիւղերու մէջ կաթիլ մը ջուրի կարօտ ընտանիքներու գոյապայքարը, աղբամաններու մէջ ուտելիք փնտռողներուն տխուր պատկերը:

Դիտելով իւրայատուկ սանրուածքով մեր կէյ խօսնակը ես կը մտածեմ թէ ինչո՞ւ մերօրեայ աղջիկները սիլիքոնային հարուստ կուրծքեր, ցցուն յետոյքներ, ուռուցիկ շրթունքներ ունենալու համար հսկայական գումարներ կը մսխեն, կ'ենթարկուին գեղագիտական գործողութիւններու, երբ միասեռականութիւնը առաջնային է ու աստիճանաբար կը տիրէ աշխարհին:

- Դուն չես գիտեր, կէյերը շատ բարի կ'ըլլան.- ըսած էր կէյական բարեկամութիւն վայելող ծանօթ մը:

Բարեկամութիւն մշակելը գովելի է, նման բարեկամ ունենալէ չեմ խորշիր, թէեւ մասնաւոր հակում ալ չունիմ նման անձերու... Ի դէպ հրեշտակներն ալ սեռ չունին, հապա սատանանե՞րը... անոնք Ս. Գիրքի փաստացի նշումով նախկին հրեշտակներ են դրախտէն վռնտուած: Կը պատկերացնեմ այդ անհնազանդ հրեշտակները, որոնց սիրուն տեսքը, սպիտակ մաշն ու հիանալի խոշոր թեւերը այլափոխուած էին, սեւ ու անասունի մազոտ մորթ, առնետեան երկար պոչ ու գազանի ահագին երախ մը ի յայտ գալով: Մանկական երեւակայութեանս մէջ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ պատէն կախուած վերջին դատաստանի նկարին դժոխքը ներկայացնող սատանաներ:

«Ետիս գնա՛ սատանայ», ըսաւ Յիսուս Քրիստոս, երբ սատանան իր որոգայթները փորձեց լարել... Բոլորս կը սարսափինք սատանայէն:

Սակայն տարիներու ընթացքին պիտի հասկնայի, թէ վերջին դատաս-

Կայարան

տանի պատկերի սահմաններէն անդին, նոյն այս հողին վրայ, որ «բոլորիս աշխարհ»ն է, Կան այլ՝ քօղարկուած սատանաներ, թանկարժէք գոստիմներ հագած, լպրծուն ժպիտով տղամարդիկ, գեղեցիկ զգեստներով, շպարուած պատրաստակամ, հմայիչ կանայք:

Նայուածքս առաջ մեկնած ձեռքերուս, կը զննեմ... այո՛, իրարմէ տարբեր են, բայց նոյնանմանութիւնն ալ տաղտկալի է. սոսկումով կը մտածեմ.-

Եթէ միասեռականութիւնը տիրէ ամէնուրեք, մարդիկ ինչպէս պիտի բազմանան, չէ՞ որ Աստուած պատգամեց.

«Գացէ՛ք, բազմացէ՛ք, լեցուցէ՛ք աշխարհը»:

Հաւանաբար, այդ օրերուն երկրագունդը անմարդաբնակ էր, սերունդներ էին պէտք շէնցնելու անսահման տարածութիւնները.

Եւ մարդը յայտնուեցաւ երկրագունդին վրայ. ինչ խօսք, սատանան ալ հետը (չէ՞ որ միասին վտարուեցան)... լծուեցաւ աշխատանքի, «ճակտի քրտինքով վաստկելու հացը»:

Մարդը՝ որ Մարդ էր, անխոնջ աշխատեցաւ, կշտացաւ կէս փոր, ապրեցաւ կէս կեանք, բայց ծաղկեցուց շրջապատը:

Մարդը՝ որ Ջարդ էր, իր սատանայ կէսին հետ ապրեցաւ, վայելեց... չարաշահեց, կեղծեց, կեղեքեց:

Առաջինին խոստացուած էր Փրկութիւն, Արքայութիւն երկնքին մէջ (որուն փաստացի գոյութիւնը կարելի չէր ստուգել, մահացող ԲԱՐԻ մարդոցմէ ոչ մէկը ապրողներուն հետ կապ պահելով տեղեկացուցած էր վայելած բարիքներուն մասին), մինչ երկրորդը արքայութիւնը փորձեց գտնել աշխարհի վրայ, դժոխքն ու դրախտը իրար խառնած, շօշափելին նախընտրելով ու գերադասելով:

Դարեր եւ դարեր անցան... աւազներով լի անապատներն անգամ վերածուեցան ծաղկուն ովասիսներու, շնորհիւ անոնց ընդերքէն բխող սեւ ոսկիին.. (Աստուծոյ գործին խելք չի հասնիր կ'ըսեն. Մէկուն առատ քար կու տայ, մէկուն խելք, միւսին... նաւթ).

Երբ մեր նախահայր միամիտ Ադամը ու նախամայր խորամանկ Եւան (այն կինը որ օձին հետեւելով մեզ զրկեց դրախտի բարիքներէն) արգիլուած խնձորը ուտելով՝ նկատեցին, թէ մերկ են ու ծածկուեցան թթենու տերեւներով... (ինչո՞ւ թթենու տերեւ, գուցէ դրախտի մէջ աւելի մեծ տերեւներ չկային). մարմնի ամօթ համարուած մասերը ծածկելու հասկացողութիւնը, անկասկած, հոնկէ ծագում առաւ:

Ադամը վստահեցաւ Եւային, հետեւեցաւ անոր: Ադամը այնքան ալ միամիտ ու հաւատարիմ չէր, բայց այլընտրանք չունէր, դրախտի մէջ այլ Եւաներ չկային.. յետոյ անոր սերունդները եղան աւելի արթուն ու աչքաբաց, հասկցան,

թէ միայն մէկ կին սիրելը ու անոր վստահիլը անխոհեմութիւն է. եւ... ի յայտ եկան բազմակնութիւնը, դաւաճանութիւնը, նոյնիսկ միասեռականութիւնը:

Վերադառնալով ապերախտ այս զոյգին, որ չգնահատեց դրախտին արժէքը (այսպէս բարիքը կորսնցնելով էր, որ մարդ արարածը պիտի իմանար անոր արժէքը), գահավիժելով երկնքէն, իրար ձեռք ամուր սեղմած Ադամն ու Եւան ինկան անծանօթ այս աշխարհի վրայ: Մէկ կողմ նետեցին դրախտէն եկած, թոշոմած թթենու տերեւները եւ իրենց մարմինները ծածկեցան իրենց որսացած կենդանիներու մորթերով: Այդպէս աւելի ապահով էր, աւելի տոկուն, յատկապէս ցուրտ գիշերներուն:

Քարանձաւային կիսավայրենի մարդը զարգացաւ, փորձեց աստիճանաբար աւելի բարետես դառնալ.

Հագուստ կրելը, անոր ձեւաւորումը, ապա նորաձեւութիւնը յառաջդիմութիւն արձանագրեց:

* * *

Երթուղիին մէջ դէմս նստած գեղեցկուհիին տաբատը ողորմելիօրէն պատռտած է, ծունկերը քզքզուած պատուհանիկներէն ցցուած. եթէ սգէչրը մակնիշի թանկ մարզակօշիկները, գեղեցիկ պայուսակը եւ սիրուն վերնաշապիկը, շպարն ու երկար խնամուած մազերը չնկատէի, այնքա՜ն պիտի խղճայի այս աղջկան... ես՝ հնառձս, որ իրազեկ չեմ վերջին նորաձեւութեան: Ուղեղս ոչ մէկ ձեւով չընբռներ, թէ ամենասուղ ճինզը ամենայատուկ ոճի պատռուածն է, որուն բացուածքներէն սրունքները կը յայտնաբերուին ամբողջովին՝ ընդգծելով անոնց գեղեցկութիւնը:

«Եւ ո՛չ մէկ մուրացկան թող ամչնայ իր պատառոտուն տաբատէն, քանզի հաւատացէ՛ք... այդ նոյնպէս նորաձեւութիւն է»:

Սակայն որոշ բանիմացութիւն ունիմ, թէ նորաձեւութեան բոլոր նշանաւոր տուները ունին իւրայատուկ մակնիշներ, փոքր այս մակնիշը երբ կը դրուի հագուստին, կօշիկին կամ պայուսակին վրայ ոսկիի կնիքի նման կ՚արժէւորէ ապրանքը, նոյնիսկ ոսկիի գինէն աւելի արժէք տալով անոր... ու յառաջադէմ երկիրներու նորաձեւութեան տուները խորամանկօրէն կը պարպեն նիւթական հնարաւորութիւն ունեցողներու, նոյնիսկ չունեցողներուն գրպանները:

«Մակնիշաւոր հագուստ կրելը մակարդակի հարց է».

* * *

Եւ թող տիրէ համատարած «դեմոկրատիա»...

Այս բառը մեծ երկիրներու ՄԵԾերուն ձեռքը ձօձուող գաւազան եւ ստորադաս երկիրներու գլխուն ճակատագրական պատուհաս է: Ուրեմն վա՜յ այն

Կայարան

երկրին, ուր չի տիրեր ցանկալի «դեմոկրատիան» (Սուրիան ամենապարզ օրինակը)...

«Դեմոկրատիա» համաշխարհային գործածութեամբ լատինարմատ այս բառը, որուն հայերէն իմաստը անխուսափելի ժողովրդավարութիւնն է... ամէն ժամանակներուն եւ շատ երկիրներու մէջ ցանկալի, բայց դժուար գործադրելի, ո՛չ կարելի է անոր հպիլ, ո՛չ մօտենալ, ո՛չ տիրանալ, մեծարժէք ադամանդի նման դրուած է ցուցադրութեան:

Իսկ ինչու «դեմոկրատիա» եւ ոչ նոյնիմաստ ժողովրդավարութիւն:

Լատինարմատ բառերու գործածութիւնը անխուսափելի է Հայաստանի մէջ... հարիւրաւոր բառեր կը վխտան խօսակցական, գրական թէ հեռատեսիլէն հնչող հայերէնը աղաւաղելով: Վերջերս «Կոռուպցիան» (փտածութիւն, կաշառակիրութիւն) բառը դարձած է երկրի ամենահետաքրքրական բառը... անկում տանող այս երեւոյթէն ձերբազատելու չափ կը ցանկամ ազատիլ նաեւ ականջներս խլացնող այս բառէն:

Լատինարմատ բառերը անտարակոյս սովետական ժառանգութիւն են. իսկ կրկնակի հարցական կը մնայ փլուզուած ու պատմութեան էջերուն անցած սովետէն պահել վատը ու վանել լաւը... այո՛ լաւը, (թէեւ լաւ բան գտնելը դժուար էր այդ ծանր ժամանակաշրջանին): Վատին կողքին լաւը նկատելն ու մատնանշելը առաքինութիւն է, այդ ԼԱՒԸ՝ բարձր որակի մշակոյթի հանդէպ յարգանքն էր, բծախնդրութիւնը...

* * *

Երեւանի մէջ վերջերս կայացած Ֆրանքոֆոնիայի միջազգային հաւաքի ամենահետաքրքրական երեւոյթը «Ռոպոթ Սոֆիան» էր, բոլոր ներկաները հիացած կը դիտէին գիտական այս մեծ նուաճումը, որուն սեռը հետեւցնելով անունէն, տեսքէն եւ շրթներկէն՝ կին էր. «ռոպոթ» կին, Եւայի նման, իսկ ի՞նչ բարիքներ պիտի բերէ բանիմաց այս ռոպոթը մեր խառն աշխարհին, ուր դրախտային թէ դժոխային պայմանները կը ստեղծեն մարդիկ. տակաւին մութ է... սակայն յստակ է, որ շիկահեր ու անգլիախօս Սոֆիան խոստացաւ յաջորդ գագաթնաժողովին խօսիլ նաեւ ֆրանսերէն:

Պեղելով անոր արմատները՝ կ'իմանանք, որ ան Սուէտական Արաբիոյ քաղաքացի է եւ... կը մտածէ աղջիկ որդեգրել, հաւանաբար երազներ ալ կը փայփայէ հարուստ սուէտցի արաբ իշխանի մը քանիերորդ կինը դառնալ: Երազանքները մարդոց ուղեղի խորշերուն մէջ փակուած կը մնան եւ հանգիստ չեն տար բարձունքներու ձգտողին, ալ ուր մնաց ռոպոթ Սոֆիային, որ քսանմէկերորդ դարու նուաճումներէն մէկն ըլլալով, արդար իրաւունք ալ պիտի ունենայ ընտանիք կազմելու: Իսկ ինչպիսի՞ ընտանիք (միասեռականներն

ալ ձեռք բերած են այդ իրաւունքը), մինչ Սոֆիայի պարագային ոոպոթներ ստեղծողները պիտի նախագծեն:

* * *

Հայեացքս կրկին կը կառչի ձեռքերուս, աջ ձեռքիս մատները կը յամառին բռունցք դառնալ: Ուսերս անփութօրէն վեր կ'առնեմ, իբր մտահոգուելու բան չունիմ. ինչո՞ւ մտահոգուիլ, երբ ժամանակը կը լուծէ հարցերը, պարզապէս համբերութիւն է պէտք, ու նայուածքս կը սեւեռեմ պաստառին.

Երգիծանքի՝ աւելի ճիշդ զաւեշտային ծրագիր է (Վումըն Ծօ... շատ հմայիչ, կիսամերկ կիներ ու իբր զուարճախօսութիւն, վիճաբանութիւն առանց մազփետուքի), երիտասարդ մը զուարճալի դէպքեր կը ներկայացնէ, կը փորձեմ խօսածը հասկնալ հայերէն բառերը որսալով ռուսա-լատինահայերէնի խառնիճաղաճին մէջէն: Հնչող քահ-քահները կը խանգարեն ու մասամբ կը լարեն ջիղերս: Հայկական կայանէ մը սփռուած, «հայկական Ծօ»-ի մը ընթացքին օգտագործուած հայերէն լեզուն, մեր մայրենին չեմ հասկնար...

Աջ ձեռքիս մատները սեղմուելով՝ բռունցք դարձած են, ուրեմն ջանք-ճիգ պէտք է թափել, անկարելի ոչինչ կայ: Քիչ մը սեղմում, քիչ մը աշխատանք ու կարելի է մաքրել ախտերը: Եւ... պիտի մաքրուի՞ն աղբերը:

Յուսալը դէպի գործնականը առաջին քայլն է: Ու «քայլ արա»-ն կը հնչէ ամէնուրեք:

Առաջ կը մեկնեմ ձեռքս՝ խլելով հեռաղեկը, կայանը կը փոխեմ... հնդկական ֆիլմաշար է (սերիալ), չեմ կրնար ըսել ներկայացուածը ֆիլմաշարի ո՞ր հարիւրերորդ թիւին հասած է: Խայտաբղէտ գոյներով հագուստներ, զգացական տեսարաններ, արցունքոտ աչքեր... դիտելու բան չէ, պիտի ըսէի, բայց վատի մէջ լաւը տեսնելու հետամուտ, հայկական ֆիլմաշարերու հետ բաղդատելով կարելի է տեսնել առաւելութիւն, դաժան տեսարանները մասամբ մեղմ են, նաեւ ամենակարեւորը՝ մարդիկ իրենց աւանդութիւնները կը ներկայացնեն, մինչ մենք Տիառընդառաջ, Վարդավառ, Ս. Սարգիս թողած՝ Հալուին, Վալանթայն կը ներմուծենք: Մակարդակի մասին արդէն ոչ մէկ խօսք:

Սրտի ցաւով կ'անջատեմ հեռատեսիլը, կոճակի սեղմումէն բթամատս կը կոտտայ:

Տակաւին, տակաւին ձեռքիս վիճակը կը մնայ մտահոգիչ... ես յոյսս չեմ կտրեր, մատներս կը շարժին, աջ ձեռքս աշխատունակ է:

Յոյսը, համբերութիւնն ու սպասումը երրորդութիւն պիտի կազմեն ու...

Օն, քայլ առաջ...

Կայուն



ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՆՇԽԱՐՆԵՐ ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻՑ

Այս ճանապարհը շուրջ մեկուկես դար առաջ անցել է իմ նախապապ Վարդանը: Այդ օրը նա աքլորականչից էլ վաղ է արթնացել, ջորուն բարձել խուրջինը՝ մի կողմում իր համեստ օրապահիկը՝ փշրած չոր լավաշի ու պանրի խառնուրդ «փշրուփլավը», մյուսում՝ ջորու համար նախատեսված գարին: Շրջվել է դեպի Քամոտդար լեռան լանջին գտնվող մեր տոհմական Սուրբ Հակոբ մատուռը, երկյուղածությամբ արտասանել «Հայր մերը», խաչակնքել և ջորու սանձից բռնած՝ իջել դեպի Նշաղբյուր, որտեղ իրեն են սպասել հարևան գյուղերից եկած ևս երկու-երեք ուխտավորներ: Նախատատս փարչից ջուր է գցել նրա հետևից և հուզումնախառն աղոթել նրա անփորձանք ուխտագնացության և բարեհաջող տունդարձի համար:

Իմ պապի պապը վտանգներով և անորոշություններով լի այս ճանապարհն անցել է մի քանի ամսում, ևս մի քանի ամսում էլ վերադարձել: Ես ինքնաթիռով եմ գնում, իսկ մեկնելու և վերադառնալու ժամանակը ընդամենը մի քանի ժամ է:

Մեկնում ենք շուրջ քառասուն ուխտավորներից բաղկացած խմբով՝ Երևանի Սուրբ Երրորդություն եկեղեցու քահանա տեր Զենոն Բարսեղյանի առաջնորդությամբ: Հենց եկեղեցու բակում կարձատև ներկա-բացակայից, նախնական ծանոթությունից և ինքնաբուխ «Հայր մերից» հետո հրաժեշտ ենք տալիս ճանապարհող հարազատներին և շարժվում: Ինձ ճանապարհողը իմ զարմիկ

Վարդանն է, որ իր նշանավոր նախապապի անունն է կրում:

Արդեն երեկո է, և ավտոբուսի խորհրդավոր կիսամութն ավելի խորհրդավոր է դարձնում երիտասարդ սարկավագի հուզառատ և առինքնող ձայնը.

Ես՝ մեղավոր ու անցավոր,
Հազար անգամ ապաշխարող,
Սակայն երբեք չարդարացող.
Ես՝ մեղավոր մի ուխտավոր:
Էջմիածի՜ն, Էջմիածի՜ն,
Երուսաղե՜մ, Երուսաղե՜մ...

Ես արդեն տեղյակ եմ, որ երգող սարկավագն իմ սենյակակիցն է լինելու Երուսաղեմում, շարժվելուց քիչ առաջ նրա հետ խմբի կազմակերպիչը ծանոթացրեց: Հայոց բանակի գնդերեց Վոլոդյան առաջին իսկ տպավորությամբ երիտասարդ հոգևորականի պայծառ և օրինակելի կերպար է:

...Ես՝ մի ընծա քո խորանում,
Մի կաթիլ խունկ քո բուրվառում,
Ջերթ քաղցր ձայն թող սպառվեմ,
Գուցե այդպես գութիդ հասնեմ:
Էջմիածի՜ն, Էջմիածի՜ն,
Երուսաղե՜մ, Երուսաղե՜մ...

Երջանկահիշատակ Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի խոսքերով գրված սրտառուչ երգը, որ հնչում է մեկնելու առաջին րոպեներին, շատերիս է հուզում, մանավանդ երբ երգիչը կրկներգերի ընթացքում «Էջմիածնի» փոխարեն նաև «Երուսաղեմ» է երգում...

Թել Ավիվ թռչող ինքնաթիռում փորձում եմ ուղևորների մեջ փնտրել-գտնել հրեական մարդաբանական տեսակը, չնայած տեղյակ եմ, որ նրանցից շատերը ճակատագրի բերումով այլևս չունեն հին հրեաներին բնորոշ դիմագծեր, այլ ավելի շուտ կազմում են եվրոպական, սլավոնական, կովկասյան, մերձավորարևելյան, անգամ աֆրիկյան մարդաբանական տեսակների հատկանիշների մի ամբողջ համախումբ: Այդուհանդերձ, մտովի առանձնացնում եմ մեծամասնություն կազմող մի տեսակ, որի ներկայացուցիչներից մեկն էլ կողքիս նստած տղան է, որ Թբիլիսիից Թել Ավիվ է մեկնում սլավոնական արտաքինով ընկերուհու հետ:

Կայուն գրական հանդես

Պարզվում է, որ իսկապես Իսրայելից է՝ Թել Ավիվից, և անունն էլ ոչ ավել, ոչ պակաս... Նոյ է:

- Իսկ Դուք ո՞ր երկրից եք,- հարցնում է Նոյը:

- Հայաստանից,- պատասխանում եմ:- Գիտե՞ք, թե ջրհեղեղից հետո որտեղ է իջել Նոյ նահապետը:

- Եթե չեմ սխալվում՝ Արարատ լեռան վրա:

- Այո: Արարատն էլ հենց մեր խորհրդանիշ-լեռն է: Նաև մեր պետական զինանշանի վրա է պատկերված:

- Իսկ Նոյը Հայաստանո՞ւմ է ապրել,- հետաքրքրվում է զրուցակիցս:

Ես նրան պատմում եմ, որ Նահապետը, ջրհեղեղից հետո իջնելով Արարատ լեռան արևելյան կողմում գտնվող դաշտավայրը, հետջրհեղեղյան առաջին բնակավայրն է հիմնել, որն իր պատվին Նախիջևան՝ «Առաջին իջևան» է կոչվել: Այնտեղ էլ մահից հետո թաղվել է Նոյը, իսկ նրա գերեզմանը հազարամյակներ շարունակ ուխտավայր է եղել թե՛ քրիստոնյաների, թե՛ մահմեդականների և թե՛ հուդայականների համար:

Նոյն այս ամենի մասին եբրայերեն պատմում է ընկերուհուն և պարբերաբար հարցեր տալիս մինչև մեր ինքնաթիռի վայրէջքը ձերմակ երկնաքերներով լի Ծովափնյա քաղաքի՝ Թել Ավիվի «Բեն Գուրիոն» օդանավակայանում:

Զարմանալիորեն մեր այցելությունն այս երկիր զուգադիպում է մի տխուր և մի ուրախ իրադարձության հետ՝ այսօր Իսրայելը վերջին հրաժեշտն է տալիս նախկին վարչապետ Շիմոն Պերեսին, իսկ վաղը նշելու է հրեական Ամանորը՝ Ռոշ հա Շանան:

Երուսաղեմը աշնան սկզբին բնորոշ խիստ շոգի փոխարեն զարմանալիորեն մեզ դիմավորում է մեղմ անձրևով: Քարե ձերմակ ու դեղնաձերմակ շենքեր, սալահատակ փողոցներ, անթիվ-անհամար աղավնիներ, դարերի գույներ ու բույրեր՝ խորհրդավոր ու զարմանահրաշ մի աշխարհ, որ բոլորովին էլ երազ չէ, այլ հենց ինքը՝ առասպելական Սուրբ քաղաքը... Հյուրանոցը, որտեղ տեղավորվում ենք, հին քաղաքից հեռու չէ և սալահատակ սարալանջի վրա խոյացող «Ջերուսալեմ Թաուեր» անվանումով հսկա մի երկնաքեր է, ի դեպ՝ տնօրենն ու փոխտնօրենն էլ տեղացի հայեր են:

Կեսօրից հետո հին Երուսաղեմում ենք: Հազարամյա պարիսպներին մերձակա հրապարակից ձգվող նեղլիկ փողոց-շուկաները տանում են քաղաքի ամենանվիրական հատվածը՝ Հարության տաճար: Դրսից որքան հնամենի և համեստ, ներսից այնքան շքեղ ու նորոգ տեսքով այս սրբազան համալիրն իր մեջ ներառում է Հիսուս Քրիստոսի խաչելության, պատանման վայրերը, սուրբ գերեզմանը, այն տեղը, որտեղ որդու խաչելության պահին կանգնած է եղել

Մարիամ Աստվածածինը, այն քարայրը, որտեղ կյանքի վերջին տարիներին ճգնել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչը... Այս բոլորի, նաև այլ իրադարձությունների հետ կապված սուրբ վայրերի ու սրբությունների տեղերում այսօր մի-մի եկեղեցի ու խորան է հառնում, մի-մի մատուռ կամ խաչքար...

Թեև առաջին անգամ եմ ոտք դնում այս վայրերում, հավանաբար ժառանգաբանական հիշողությամբ, զարմանալի հարազատություն եմ զգում այս ամենից...

...Հայր Թեոդորոսի՝ Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի տեսչի մասին շատ էի լսել նախորդ խմբերի ուխտագնացներից, տեսել էի նրա լուսանկարները, գիտեի, որ համակողմանի գիտելիքների տեր հոգևորական է՝ արմատներով Գողթն գավառի Ցղնա գյուղից, բայց չէի պատկերացնում, որ նրա հետ ծանոթանալու բախտ եմ ունենալու Երուսաղեմում գտնվելու առաջին իսկ օրը՝ Հարության տաճարի բակում: Պարզվեց, որ մեր ուխտագնացության ողջ ընթացքում հայր սուրբն է լինելու մեր հիմնական ուղեկիցն ու մեկնաբանը:

Սուրբ քաղաքի գլխավոր սրբավայրին ծանոթանալուց հետո քայլում ենք դեպի հայոց Սրբոց Հակոբյանց նշանավոր մայրավանք: Ճանապարհը հաճելիորեն անցնում է եռագույններով զարդարված՝ հայկական թաղամասով, որ հին Երուսաղեմի չորս թաղամասերից մեկն է, և որի երկայնքով երուսաղեմահայերին պատկանող կրպակների շարանն է:

Երկու Հակոբոսների տաճարում ուխտագնացներս անբացատրելի զգացողությամբ ենք վայելում առաջին պատարագը: Երևի արարողությունն առանձնահատուկ է դարձնում միջավայրը՝ պատերի հնամյա որմնանկարները, հախճասալիկները, տաճարը զարդարող գորգերը, հնագույն եկեղեցական սպասքն ու անթիվ-անհամար ջահերն ու կանթեղները: Պատարագի հնչյուններն ասես մի-մի աղավնի դարձած՝ ճախրում են գմբեթն ի վեր ու թեթևասահ դեպի երկինք սավառնում...

Հայր Թեոդորոսի հետ զրուցելը նույնքան հաճելի է, որքան նրա անցկացրած լուսավոր պատարագն ու բովանդակալից քարոզն ունկնդրելը: Պարզվում է, որ, իրոք, մորական արմատներով Գողթն գավառի Ցղնա գյուղից է սերվում. մայրը՝ Ասյա Հայրապետյանը, ծնունդով ցղնեցի է, իսկ մորական տատը՝ Ոսկիկարը, Ցղնայի ամենահարգված և իմաստուն մամիկներից է եղել:

- Հա՛յր սուրբ, փաստորեն Ձեզ քեռի եմ գալիս...- կեսկատակ նկատում եմ ես:

Հայր Թեոդորոսն ի պատասխան և ի հաստատումն իմ խոսքերի՝ ժպտում է իր բարեկիրթ ժպիտով:

Մի քանի օր անց սուրբ հայրն ինձ վարժարան կհրավիրի, հանպատրաստից կհանդիպեմ Ժառանգավորացի սաների հետ, կպատմեմ Նախիջևանի, նրա պատմության և մշակույթի մասին: Սաների հետ ընթրելուց հետո բախտ

Կայուն գրական հանդես

կունենամ տեսնելու Երուսաղեմի հռչակավոր գրադարանը՝ իր հսկա հատորյակներով ու առձեռն գրքույկներով, կծանոթանամ գրադարանի երկարամյա նվիրյալ և «տիրուհի» օրիորդ Արփիկի հետ, որի աշխատասենյակը ժամանակին ոչ այլ ինչ, քան Կիլիկիո Հեթում թագավորի ննջարանն է եղել, իսկ պատի մյուս կողմում Սուրբ Թեոդորոս եկեղեցին է, որտեղ դարեր առաջ առանձնացել և աղոթել է Կիլիկիո հայոց արքան...

Հետո տեսչական առանձնասենյակում հայր Թեոդորոսի հետ երկար կզրուցենք մեր կորուսյալ հայրենի եզերքի շուրջ, Համացանցի արբանյակային քարտեզների վրա կփնտրենք-կգտնենք Ցղնան ու Ազնաբերդը, որ այսօր դաժան ճակատագրի բերումով Չանանաբ ու Չալխանկալա են դարձել, Յութուբում գյուղերի այսօրվա վիճակի մասին ֆիլմեր կգտնենք, և մեր զրույցը երկար կձգվի: Միայն ուշ երեկոյան վարժարանի սաներից մեկի ուղեկցությամբ հյուրանոց կհասնեմ:

Համբարձման լեռը Ձիթենյաց լեռան գագաթներից մեկն է: Այստեղից է Հիսուս Քրիստոսը խաչելությունից քառասուն օր անց երկինք համբարձվել: Գրեթե ողջ Երուսաղեմը, Հորդանան գետն ու Մեռյալ ծովը մեր աչքի առաջ են: Առավոտյան Գեթսեմանում էինք, տեր Զենոնը շքեղ պատարագ մատուցեց Սուրբ Աստվածածնի տաճարում՝ Տիրամոր գերեզմանի մոտ: Դա այն եկեղեցին է, որ ժամանակին կառուցել է Երուսաղեմի հայ թագուհի Մելիսինդան: Ի դեպ, այստեղ ամբողջ շարք թագուհիներ են հայկական ծագում ունեցել՝ Մորֆիա, Արդա, Ագնես, Սիբիլ տպավորիչ անուններով, որոնցից մի քանիսի շիրիմները հենց Գեթսեմանում են՝ Տիրամոր շիրմի մոտ:

Պատարագից հետո նախաճաշել էինք նռնենիներով և ձիթենիներով լի Գեթսեմանի նշանավոր պարտեզում, ապա մեկնել Բոլոր ազգերի եկեղեցի՝ հոյակերտ-մարմարաշեն մի տաճար, որ քսաներորդ դարում է կառուցվել՝ բազմաթիվ եվրոպական երկրների տրամադրած միջոցներով:

Եվ ահա, այդ հարուստ շրջայցերից հետո, օրվա երկրորդ կեսին տպավորությունները շարունակվում են այստեղ՝ Համբարձման լեռան բարձունքում: Հայր Թեոդորոսը սուրբ լեռան վրա աճող մրտենու փոքրիկ թփից կապտավուն պտուղներ է հյուրասիրում ինձ, սարալանջից ուխտագնացներիս ցույց տալիս սալահատակ ճանապարհի պահպանված հատվածը, որտեղով խաչելության են տարել Հիսուս Քրիստոսին, Երուսաղեմի պաղեստինյան հատվածում՝ Օմարի սևագմբեթ և Ալ Ակսա (Ժայռի) ոսկեգմբեթ մզկիթները, որոնք կառուցվել են Երուսաղեմի տաճարի տեղում:

Քարի վրա թողնված՝ Տիրոջ վերջին ոտնահետքը բազմաթիվ հավատացյալների է Համբարձման լեռ բերում՝ թե՛ քրիստոնյաների, թե՛ մահմեդական-

ների, քանի որ այսօր մզկիթի բաղկացուցիչ մասը կազմող մատուռանման փոքրիկ կառույցում է գտնվում՝ ապակյա ցուցափեղկ-պատյանի տակ: Երկակի զգացողություններ առաջացնող այդ պահին, երբ շատերի նման համբուրում եմ Տիրոջ ոտնահետքն ամփոփող ապակին, միաժամանակ վերևից մահմեդական աղոթքի մելամաղձոտ ելևէջներ լսում, Հայաստանում կատարվող ուշագրավ փոփոխությունների մասին հերթական կարևոր հաղորդագրությունն եմ ստանում Վարդանից: «Տե՛ր Աստված, Դու պահապան եղիր մեր երկրին ու ժողովրդին».- կրկին շշնջում եմ իմ աղոթքում:

Մզկիթի հակառակ կողմում ուղղափառ քրիստոնեական վանք ենք «հայտնաբերում»՝ ռուսական մենաստան, որը, պարզվում է, ժամանակին հայոց Համբարձման եկեղեցին է եղել, հատակի հախճանկար-գորգն էլ իր հերթին է այդ մասին խոսում: Ընդհանրապես, գրեթե բոլոր տերունական վայրերը նախապես հայերն են սրբացրել և հռչակել քրիստոնյաների շրջանում, միայն դարերի ընթացքում է դրանց զգալի մասը տնօրինվել ուղղափառների և կաթոլիկների կողմից:

Խմբի ամենակրտսեր ներկայացուցիչներից մեկը՝ հնգամյա Դավիթը, սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրում է խորանը՝ առաջ բերելով ջղային միանձնուհու բուռն զայրույթը: Նրա վրդովմունքը մեղմելու համար քահանան, սարկավագը և ես համատեղ ուժերով վերծանում ենք հախճանկարի գրաբար արձանագրությունը՝ «Այս է յիշատակարան տեառն Յակովբայ, որ եղեւ ձեռն խնդրելոց», աշխարհաբարով՝ «Տեր Հակոբի հիշատակին, որ եղավ նրա խնդրանքով»:

Թաբոր հարթագագաթ լեռան վրա Պայծառակերպության նշանավոր եկեղեցին է հառնում: Շրջապատի վրա իշխող լեռան բարձունքը իսկական դրախտի է նման: Զգացվում է Միջերկրականի հաճելի շունչը, և հեքիաթային այս վայրում այնպիսի փարթամ բուսականություն է աճում, որ միայն կինոնկարներում կարելի է տեսնել... Դափնեվարդերն ու ֆիկուսներն այստեղ հսկա ծառեր են, իսկ մեր ճանապարհի աջ ու ահյակ կողմերում ծաղկած հալվեի թփերով լի ամբողջ բլրակներ են փթթում... Ի դեպ, առավոտյան լեռան ստորոտում երկու հսկա ժանտաթզենի էլ տեսա՝ նարնջամարջանագույն պտուղներով ծանրաբեռնված... Ավետարանում հիշատակված այդ տարաշխարհիկ ծառի միայն լուսանկարներն էի համացանցում տեսել, իսկ իրականում սոսուն բավական նման ծառեր էին, որոնց ճյուղերից առատ ողկույզներով պտուղներն էին կախված: Սակայն այդ գեղեցիկ և գայթակղիչ պտուղները ճաշակել փորձողներս բավական աննախանձելի վիճակում հայտնվեցինք: Պարզվեց, որ հասունանալուն պես՝ ժանտաթզերի մեջ մրջյունների և զանազան այլ միջատների մի այնպիսի քանակություն է ներթափանցում՝ ներսի նեկտարով

սնվելու համար, որ հետաքրքրասերներին, մեղմ ասած, մնում է ընդամենը հիասթափվել՝ պտուղների տարաշխարհիկ համի փոխարեն քիմքի վրա զգալով միջատների անկոչ ներկայությունը:

Հետդարձին հայտնագործության նման մի զարմանալի բան եմ անում: Թաբոր լեռան և նրա լանջին գտնվող Դեբորիա բնակավայրի անունները օգնում են վերջապես ստուգաբանել իմ շատ սիրելի հորական տատի՝ նախկինում գրեթե անստուգաբանելի անունը: Արմատներով վանեցի, ծնունդով վայոցձորցի իմ Թեբուր (Թեփուր) տատի անունը որոշ վերապահությամբ միշտ կապել եմ «փետուր» բառի բարբառային ձևի հետ, սակայն հենց այս պահին ակամայից առավել հավանական տարբերակի վրա եմ կանգ առնում... Տատիս անունը, ամենայն հավանականությամբ: Հին կտակարանում հիշատակված մարգարեուհի-դատավորուհի Դեբորայի անունն է՝ քրիստոնեական աշխարհում բավական տարածում գտած և հատկապես Միացյալ Նահանգներում և Անգլիայում խիստ կիրառական դարձած անձնանուններից մեկը...

Վայոց ձորի Խաչիկ գյուղում ծնված իմ տատին մկրտելիս հավանաբար գյուղական քահանան հենց Դեբորա է կոչել: Նման հինկտակարանյան անուններ քիչ չեն կիրառվել անցյալում: Ընդամենը մի քանի տասնամյակ առաջ Հայաստանի գյուղերում կարելի էր գտնել բազմաթիվ Զեբեթներ, Աբիսակներ, Մամբրեներ, Սողոմեներ, Բերսաբեներ, Ասանեթներ և աստվածաշնչյան այնպիսի այլ անուններ, որոնք միայն քահանաներին էին ծանոթ, իսկ հասարակ մարդկանց այնքան էին անծանոթ, որ նրանք երբեմն շփոթում էին այդ անունների սեռային պատկանելությունը:

Միանգամայն հնարավոր եմ համարում, որ տատիս ստացած Դեբորա անունն է տեղական բարբառի հնչյունափոխական կանոններով Թեփուր դարձել. նախ բառավերջի ա-ն ընկել է (ինչպես Թամարա-Թամար) երկու ձայնավորների միջև, բ-ն փ դարձել (ինչպես Թագուհի-Թաքուհի), ապա փ-ի ազդեցությամբ դ-ն դարձել է թ (ինչպես գըդակ-գըթակ-քըթակ), այնուհետև՝ ր-ից առաջ ո-ն դարձել է ու (ինչպես Հոռոմ-Հուռում): Եվ արդյունքում այդ անճանաչելի ձևն է ընդունել մեծ մորս աստվածաշնչյան ծագումով հնչեղ անունը...

Տատս պապիս հետ Առաջին աշխարհամարտին հաջորդած գաղթի տարիներին էր ամուսնացել և, բնականաբար, չէր տեսել նրա պապ Մուղսի Վարդանին, բայց նրա մասին լսած հիշողությունները հենց ինքն էր փոքրերիս փոխանցում: Պատմում էր, որ նա շատ աստվածավախ, գթասիրտ մարդ է եղել, Երուսաղեմ գնալուց առաջ իր ցորենի շտեմարանների ողջ պարունակությունը կարիքավոր համագյուղացիներին է բաժանել, նաև այլ բարեգործություններ արել:

- Որ ասեմ, ասելու են՝ հորինում է, բայց դե ո՞նց չասեմ: Էս ցեղում ով որ ազգանունը Մուղսու անունով Վարդանյան թողեց, տես քանի տղա ունեցավ.

Աբգարինը՝ երեքն է, Տրդատինը՝ էլի երեքը, Լևոնինը՝ չորսը, Լևոնի Նահապետինն ու Անանիայինը՝ երեք-երեք, Փիլիպոսի Վարդազարինը՝ չորսը... Իսկ ով Վարդանի որդի՝ հյուսն Գրիգորի անունով գրվեց՝ կա՛մ տղա չունեցավ, կա՛մ էլ տղա թոռներից միայն աղջիկներ ծնվեցին... Էդպիսի սուրբ մարդու անունից նրա սերունդը երևի չպետք է հրաժարվեր...

Իր պապի անունից չհրաժարված պապս էլ էր երեք որդի ունեցել, սակայն մանկահասակ ավագ որդին մահացել էր գաղթի տարիներին, իսկ հայրս՝ քսանութը դեռ չբոլորած:

Մի օր, երբ բավականաչափ մեծ էի, տատս առաջին անգամ իր հետ գերեզմանատուն էր տարել: Նա հուզված ցույց էր տվել հորս շիրմաքարը՝ գրաբար արձանագրությամբ և պատգամել, որ երբ ավելի մեծանամ և որդի ունենամ, անպայման նրան հորս անունով կոչեմ: Այդ օրը շիրմատան մեր տոհմական հատվածում մի հին գերեզմանաքար էլ նկատեցի՝ տարիների ընթացքում մի կողմի վրա քիչ թեքված, գորշ, նարնջագույն ու կանաչավուն քարաքոսերով այնքան պատված, որ ոչ մի մակագրություն հնարավար չէր նշմարել հսկա քարի վրա: Մեծ մայրս առանձնակի ակնածանքով էր խունկ ծխում այդ գերեզմանին:

- Տա՛տ, ո՞վ է թաղված այստեղ,- հարցրի:

- Ձեր ցեղի ամենամեծն է: Էլ ո՞վ պետք է լինի, բալե՛ս,- պատասխանեց նա:

Ես հասկացա, որ այնտեղ հենց ինքը՝ մեր տոհմի նահապետն է ննջում:

Նախապապիս շիրմաքարը, ապա նրա ժպտացող դեմքը աչքիս առաջ եկան խորհուրդներով լի այն գիշեր, երբ առաջին անգամ Տիրոջ գերեզմանին հպվեցի, երբ համբուրեցի ճերմակ մարմարե քանդակազարդ տապանաքարը՝ զարմանալիորեն սառնության նշույլ անգամ չզգալով... Գուցե հենց նույն տեղում էր չոքել և շիրմաքարի նույն տեղը համբուրել իմ պապի պապը... Տեսնես ի՞նչ էր խնդրել իր աղոթքում: Բնականաբար՝ իր ընտանիքին ու հարազատներին առողջություն ու երջանկություն, իր հայրենի երկրին ու հայրենակիցներին՝ բարօրություն: Այդ գիշեր ես փաստորեն մեկուկես դար անց նորոգեցի նրա աղոթքը՝ Տիրոջից խնդրելով նաև, որ պահպանի հայրենիքի սահմանին կանգնած զինվորին: Իսկ ամենավերջում իմ ամենանվիրական խնդրանքը Տիրոջն ուղղեցի, որ հոգուս խորքում պահպանել էի ուխտագնացության որոշումը կայացնելու առաջին իսկ պահերից՝ աղոթեցի, որ օրերից մի օր արժանի լինեմ տիրոջ իրավունքով իմ պաշտելի ծննդավայրի հողը համբուրելու, իմ հայրական տունը նորոգելու, իմ ապուպապ Վարդանի թեքված շիրմաքարը ուղղելու բախտին...

Սուրբ երկրում տեսած տերունական վայրերի թողած անջնջելի տպավո-

ությունները շարունակում են յուրովի լրացնել Հրեաստանի բուսական աշխարհի հրաշքները, որոնք շարունակում էին զարմացնել հաջորդող օրերին Նազարեթում, Կափառնայումում, Տաբղայում, Կանայում... Ամենուրեք երկնասլաց արմավենիներ, մանգոյի ու բանանի անթիվ-անհամար այգիներ, անգամ ամենաթեք սարալանջերին՝ ձիթենիների անսկիզբ-անվերջ կանոնավոր շարքեր են, իսկ շքաժառի հազվագյուտ մի տեսակը, օվալաձև պտուղներով ցիտրուսային բուրավետ կինկանի հսկա թփերը, որ տեսանք Գալիլիա լճի ափերին, ուղղակի հեքիաթային էին...

Ի դեպ, այդ զարմանահրաշ շրջայցից Գալիլիա լիճը կտրող-անցնող նավով վերադարձանք, որի վրա նավարկության ողջ ընթացքում հայ ուխտագնացներիս պատվին մեր եռագույնն էր ծածանվում, և մեր ազգային-հայրենասիրական երգերն էին հնչում՝ պարի հրավիրելով խմբի երիտասարդներին: Ճաշին համտեսեցինք այդ կողմերում շատ հայտնի «Պետրոսի ձուկը» և տեղական սառնորակ մոհիտոն:

Մի գիշեր անցկացրինք Տիբերիա քաղաքի «Ռոն Բիչ» հարմարավետ հյուրանոցում, որ տեղադրված էր Գալիլիա լճի գեղատեսիլ ափին: Առավոտյան, երբ հյուրանոցից լճափ իջա, իմ սենյակակից երիտասարդ սարկավագներին լճում լողալու փոխարեն լողազգեստով պլաստմասսե աթոռներին նստած, ոտքերը ջրի մեջ տեսա: Նրանք, ըստ երևույթին, ինչ-որ բան էին վայելում և, ինձ նկատելով, հրավիրեցին նստելու լճափի ազատ աթոռներից մեկին: Խիստ անսպասելի մի բան կատարվեց. նստելս ու տեղիցս ցատկելը մեկ եղավ՝ պարզվեց, որ լճում ապրում են «գառա ռուֆա» անունով հայտնի փոքրիկ ձկների անթիվ-անհամար վտառներ, և ոտքերի ավելորդ մաշկով սնվող այդ մաքրասեր «բժիշկ» ձկնիկներն ընդամենը մարդկանց ազատում են ոտքերի մահացած մաշկից:

Լինել Սուրբ երկրում և չայցելել Յաֆֆա հնագույն քաղաքի Ս. Նիկողայոս հայոց վանք, անկարելի էր: Գրեթե մի ամբողջ ցերեկ անցկացրինք ծովափնյա գեղատեսիլ այդ վանքում և նրա շրջակայքում, վայելեցինք Միջերկրականի մաքրամաքուր ջրերը:

Ս. Նիկողայոսը իր բարեկարգ տեսքով և ամրակուռ պատերով միջնադարյան ամրոցի էր նման, իսկ նրա վանահայրը՝ բարձրահասակ, շիկահեր հայր Տիրան վարդապետը, այնքան էր նման կիլիկյան շրջանի իշխանի, որ շատերիս թվում էր՝ Կիլիկյան Հայաստանից մնացած նվիրական հողի մի պատառիկի վրա ենք, մանավանդ որ քաղաքի անունը կապ ունի Նոյի կրտսեր որդի Հաբեթի՝ մեր ժողովրդի հեռավոր նախնու անվան հետ և հայկական աղբյուրներում հայտնի է նաև Հոպպե անունով:

Սուրբ երկրի ամենանշանավոր սրբավայրերից մեկն էլ Բեթղեհեմում է՝ Պաղեստինի տարածքում: Հսկա պարիսպներով շրջափակված սահմանից ներս մտնելով՝ շուտով հայտնվում ենք Ս. Ծննդյան վանք տանող սալահատակ փողոցում, որի երկայնքով շարված են հայ եկեղեցուն պատկանող անթիվ-անհամար կրպակները: Գնորդներին գրավելու համար արաբ առևտրականներից շատերը ոչ միայն կրպակների մուտքերին մեր եռագույնն են կախել, այլև ժամանակ առ ժամանակ Հայաստանի օրհներգն են հնչեցնում:

Բարձունքի վրա վեր հառնող Հայոց վանքի հազարամյա քանդակազարդ դուռը ուղղակի ցնցող վեհություն ունի: Կիլիկիո հայոց արքա Հեթում Առաջինի պատվերով հայ վարպետների պատրաստած դուռն արդեն շուրջ ութ դար զարդարում է վանքի մուտքը: Այդ օրը տեր Զենոնը մի հիշարժան պատարագ էլ Ս. Ծննդյան Մսուրում մատուցեց: Պատարագի պահին մի քանի ուխտավորներով պատիվ էինք ունեցել կանգնելու երեք մոգերի երկրպագության տեղում: Ի դեպ, աստվածաշնչյան Արևելքը, որտեղից եկել են Մելքոն, Գասպար և Բաղդասար մոգերը, շատ աստվածաբաններ աշխարհագրորեն նույնացնում են Հայաստանի հետ, ինչպես Հայաստանի հնագույն անվանումներից մեկի՝ Ազգիի անունից բխող Ասիա աշխարհագրական անունն է նախապես Փոքր Ասիա ընկալվել, ապա ողջ մայրցամաքին վերագրվել:

Պատարագից հետո բարձունքից վայելում ենք բեթղեհեմյան համայնապատկերը, ապա իջնում նշանավոր Կաթի քարայրը, որտեղ Տիրամայրն առաջին անգամ կերակրել է մանուկ Հիսուսին:

Երեկոյան Հայ եկեղեցու պատմության ուսուցչուհի Անահիտ Խաչատրյանի հետ երուսաղեմյան հուշանվերների և քաղցրավենիքների վերջին գնումներն ենք անում Սուրբ քաղաքի հին շուկայից: Մեր հերթական «Հա՞ու մաչ»-ին բավական վարժ հայերենով «Տասնհինգ դոլար» կամ «Քսան դոլար» են պատասխանում հայերի և Հայաստանի հանդեպ ընդգծված բարյացակամություն դրսևորող տեղացի արաբները: Քաղաքի հրապարակում իսրայելցի զինվորների ու զինվորուհիների շարքեր էլ ենք տեսնում, որոնք ինչ-որ տեղ են պատրաստվում մեկնել: Հետո իմանում ենք, որ այդ օրը հերթական միջադեպն է գրանցվել իսրայելցիների և պաղեստինցիների միջև, և անգամ զոհեր են եղել:

Այս վայրերով շուրջ մեկուկես դար առաջ է անցել իմ նախապապը՝ Խառատենց Վարդանը: Ուխտագնացությունից հետո վերադառնալով հայրենի գյուղ՝ Խառատ Գրիգորի թոռ Վարդանը ստացել է Մուղսի պատվանունը և դարձել Մղսոնց նորանջատ տոհմի նահապետը: Երեք որդիներ, երեք դուստրեր և բազմաթիվ թոռներ ու ծոռներ է ունեցել Մուղսի Վարդանը, և ծոռներից հենց հորս է վիճակվել կրել իր նշանավոր նախապապի անունը: Իսկ երրորդ

Վարդանը, որ ժառանգեց իր մորական պապի անունը, քրոջս տղան եղավ:

Վարդանը իմ միակ զարմիկն է: Աշխարհ գալու օրվանից ես նրան նաև իմ տղան եմ համարում, քանի որ նրա ծննդյան հետ կապված՝ շատ զարմանալի, խորհրդավոր մի պատմություն կա մեր ընտանիքում:

Իր իրական ծննդից ամիսներ առաջ Վարդանը նախ իմ երազում է ծնվել. դեկտեմբերյան մի օր քրոջս գրկին տղա երեխա էի տեսել: Նա ծնվեց այդ երազից չորս-հինգ ամիս անց և դիմագծերով, ինչպես առաջինը քույրս էր նկատել ծննդատանը և երկտողում գրել, ճիշտ իր մորեղբորն էր նման:

Վարդանը նաև իմ որդին է, քանի որ նույնիսկ այդ երազից էլ շատ տարիներ առաջ նախ իմ երազանքում է ծնվել: Երբ պատանեկան տարիքում կարդում էի Վարդգես Պետրոսյանի «Հայկական էսքիզները», ցնցվում մեր ժողովրդի հանդեպ թուրքերի իրականացրած հրեշավոր ոճրագործություններից, անվանի հրապարակախոսի՝ աշխարհասփյուռ հայերին ուղղված կոչ-պատգամից տպավորված՝ երազում էի, որ իմ ապագա տղան հենց ապրիլի 24-ին ծնվեր՝ ի հեծուկս մեր դարավոր թշնամու և ի հատուցումն մեր ազգային մեծ վրեժի: Որդի ունենալու ճակատագիր ես չունեցա, բայց իմ միակ զարմիկը՝ միակ քրոջս միակ տղան, զարմանալիորեն հենց ապրիլի 24-ին ծնվեց՝ ոչ միայն իմ երազած որդու ծննդյան օրը, այլև, որքան ես հասկացա՝ առաջին անգամ գրկելով նրան, ճիշտ և ճիշտ նրա պատկերով: Եվ այդ ամենից հետո ինչպե՞ս կարող էր չստանալ իր պապի ու նշանավոր նախապապի անունը...

Վաղուց որոշել էի զարմիկիս հետ մեկնել իմ տոհմի նահապետի ուխտագնացությունը նորոգելու, սակայն ընտանեկան ինչ-ինչ հանգամանքներ խանգարեցին, և Սուրբ երկիր մեկնողների խմբին միայնակ միացա: Այդուհանդերձ, իմ միակ ճանապարհողն ու դիմավորողը հենց Վարդանը եղավ:

Ողջ գիշեր կրկին Հարության տաճարում ենք: Առավոտյան մեր ուխտագնացության գլխավոր արարողությունը՝ Վարագա Սուրբ Խաչի պատարագն է անցկացվելու: Գիշերը, երբ դեռ հայ եկեղեցու կեսգիշերային ժամերգությունը չի սկսվել, ուղղափառներն են անցկացնում իրենց արարողությունը: Տաճարի բոլոր հարկաբաժինները լցված են հույն սաղմոսերգուների երգեցողության քաղցրանուշ ելևէջներով: Այդ ժամանակ ուխտագնացներս ազատ ուսումնասիրում ենք տաճարի ազատ խորանները: Ես և խմբի աղջիկներից մեկը՝ լրագրողուհի Ռուզան Ավոյանը, Գողգոթայի խորանի մոտ ենք:

- Կարո՞ղ եք ասել՝ ո՞ւմ է նման Տիրամայրը,- խորամանկ ժպիտով ասում է Ռուզանը, որ արդեն երրորդ անգամ է Երուսաղեմ գալիս:

- Իհարկե՝ քեզ,- ի զարմանս նրա՝ քիչ մտածելուց հետո պատասխանում եմ ես:

Իրոք, Տիրամոր պատկերը, որ կարծես խոշորացրած ոսկեզօծ բյուզանդական սրբապատկեր լինի, Ռուզանին շատ է նման...

Ողջ գիշեր անքուն մնացած ուխտավորներից ոչ մեկի դեմքին հոգնածության նշան անգամ չկա՝ ո՛չ խմբի ավագի՝ ութսունն անց մայրիկի, ո՛չ էլ երեք տարեկան աղջնակի: Հավատքի աներևույթ ուժը զորացնում է բոլորիս:

Առավոտյան, պատարագից առաջ, տաճարը լցվում է հայ ուխտավորների և երուսաղեմահայերի հոծ բազմությամբ:

Տոնական պատարագի ժամանակ ծանոթ դիմագծերով մի համակրելի տիկին է գրավում ուշադրությունս: Չնայած գլխին ժանեկազարդ գլխաշոր ունի, անմիջապես ճանաչում եմ նրան. դե իհա՛րկե, Անուշ Նագգաշյանն է՝ երուսաղեմցի ճանաչված բանաստեղծուհին և բանասերը, որի նրբաճաշակ ստեղծագործությունները հիացմունքով եմ կարդացել և նրան հանդիպելու առիթ եմ ունեցել Երևանում:

Երուսաղեմում գտնվելու առաջին իսկ օրը հետաքրքրվել էի՝ քաղաքո՞ւմ է արդյոք Անուշը, սակայն մի տարեց երուսաղեմահայ ասել էր, որ նա Միացյալ Նահանգներում է: Պարզվեց, որ տղան՝ Արփիարն է ԱՄՆ-ում ապրում, և Անուշն ընդամենը ժամանակ առ ժամանակ հյուր է գնում որդուն:

Ցավոք, ժամանակի սղության պատճառով չկարողացա Անուշին այցելել, տեսնել նրա նկարների հավաքածուն, բայց հասցրեցինք հաճելի մակագրություններով գրքեր փոխանակել: Բանաստեղծուհու նվիրած երեք գրքերի մեջ էջանշանի փոխարեն մի գեղեցիկ բացիկ-այցեքարտ հայտնաբերեցի, որի վրա Սրբոց Հակոբյանց մայրավանքի խորապատկերին իր հայտնի տողերն էին. «Ամէն առտու, երբ արթնամ ու սենեակիս վարագոյրը բանամ, Սուրբ Յակոբի զոյգ գմբէթները զոյգ խաչերով կը նային ինծի... Կը խաչակնքեմ... օրս կը սկսի...»:

Իմ գրադարանի ամենապատվավոր դարակում մի հնատիպ գիրք կա, որ ամենայն հոգատարությամբ և խնամքով եմ պահպանում: Դա ուղիղ երկու հարյուր երեսունհինգ տարեկան, կաշեկազմ հնատիպ մի գիրք է՝ «Գիրք պատմութեան Սրբոյ և մեծի Քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս և սրբոց Տնօրինականաց Տեղեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» պատկառելի վերնագրով: Տպագրվել է 1782-ին Կոստանդնուպոլսում, Հովհաննես վարդապետի աշխատասիրությամբ: Տոհմական այս մասունքը տարիներ առաջ ազգականներս են ինձ նվիրել Սուրբ Ծննդյան տոնի նախօրյակին: Գիրքն առաջին անգամ տեսել եմ իմ դպրոցական տարիներին, մեր տոհմի ավագ սերնդի ամենագրագետ և ամենագրասեր ներկայացուցիչներից մեկի՝ պապիս հորեղբորորդի Լևոն պապի ցորենի շտեմարանում: Որ անկեղծորեն խոստովանեմ՝ իմ

Կայուն գրական հանդես

տանը հանգրվանած այդ գիրք-մասունքին արժանի լինելու համար նաև որոշեցի Սուրբ երկիր մեկնել...

Ես ենթադրում էի, որ արդեն դարերի տարիք ունեցող ամրակուռ-կաշեկազմ այս գիրքը, ամենայն հավանականությամբ, իմ նախապապն է ժամանակին գնել Սուրբ քաղաքից կամ գուցե այնտեղ նվեր է ստացել որևէ հոգևորականից: Հնարավոր էի համարում նաև այն վարկածը, ըստ որի՝ գիրքը գուցե ուղղակիորեն ոչ մի կապ չունի Մուղսի Վարդանի հետ և ընդամենը Ազնաբերդի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերջին քահանան է խորհրդային անաստվածության տարիներին՝ աքսորվելուց առաջ, փոխանցել մեր գերդաստանին:

Իրար հակասող այս մտքերով համակված՝ մի օր գիրքը Մատենադարան տարա՝ լուսանցքների բազմաթիվ անընթեռնելի մակագրություններն ու հիշատակարանները վերծանելու: Այդ խնդրում սիրահոժար օգնեց Մատենադարանի երիտասարդ ձեռագրագետ-գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Արսեն Հարությունյանը:

«Քրիստոսի ծառայ Տէր Հայրապետ, 1782»՝ ահա ամենահին մակագրությունը, որ իրենից ներկայացնում է ութանկյուն մի կնիք՝ գրքի վերջին էջերից մեկում: Փաստորեն, գրքի առաջին տերը սույն Հայրապետ քահանան է եղել, այնուհետև, ի թիվս բազմաթիվ հոգևորականների անունների, հիշատակարանների մեջ առանձնանում են «Աստուածատուր Տէր Ստեփանոսի ի Հազարջրիբ ի Ջուղաու ծանուցանեմ հրամանոցդ զի իցե ողջ և առողջ բարկեցութիւն...», «Յիսուս Քրիստոսի ծառայ Դաւիթ Տէր Ստեփանոսեան ի Հազարջրիբ ծանուցանի զիրամանոցդ իցե ողջ և առողջ բարի կեցութիւն...», «Ես՝ Քրիստոսի ծառայ Այվազս զքեզ աղաչեմ ով Տէր Յիսուս լեր ձեռնատու ինձ ... և հայրն իմ Ստեփանոս անվանի սա է Տեր Աբրահամի որդի» և նման մակագրություններ: Վերջիններս ակնհայտորեն հուշում են, որ այս գիրքը ամենայն հավանականությամբ պատկանելիս է եղել Նոր Ջուղայից ոչ հեռու գտնվող՝ Փերիա գավառի Հազարջրիբ գյուղի Ս. Աստվածածին վանքի քահանա տեր Ստեփանոս Տերտերյանին (1746-1813) և նրա քահանայական տոհմին: Տեր Ստեփանոսը հայտնի է եղել նաև որպես պատմաբան և բանաստեղծ՝ Ստեփանոս Երեց անունով:

Գրքի հիշատակարանները կարդալով՝ կրկին իրականի նման տեսնում եմ իմ նախապապ Վարդանին, որ Երուսաղեմում հանդիպել է հազարջրիբցի մի հոգևորականի: Գուցե նա հենց մակագրություններում հիշատակված տեր Դավիթ քահանա Ստեփանոսյանն է եղել՝ Ստեփանոս Երեցի թոռը կամ ծոռը, որ նախապապիս է հանձնել «Երուսաղեմի պատմությունը»՝ ասելով.

- Վարդան, որդի՛ս, մենք էլ ընդամենը երկուսուկես դար առաջ՝ Շահ Աբ-

բասի կազմակերպած բռնագաղթի օրերին, Նախիջևանից ենք գաղթել: Քո հայրենի գյուղի եկեղեցուն եմ նվիրում մեր տոհմական այս մասունքը: Թող այսուհետ այն հանգրվանի մեր նախնիների բնօրրանում:

Հարյուր հիսուն տարի առաջ՝ աշնան մի մայրամուտի, իմ ուխտագնաց նախապապը ծննդավայր է վերադարձել: Նշաղբյուրի մոտ նրա գալստյան ավետիսին սպասող հարազատներն ու հարևան-բարեկամները որախության բացականչություններով և դիոլ-զուռնայով են դիմավորել Մուղսի Վարդանին: Երեկոյան նրա օջախում մեծ բազմություն է հավաքվել, աչքալուսանքի են եկել ոչ միայն համագյուղացիները, գյուղի քահանան, այլև հարևան ճահուկ, Օծոփ, Այլապատ գյուղերից ազգականներ և բարեպաշտ հայրենակիցներ: Օրեր շարունակ ինքնաբուխ ուրախությամբ նշվել է ուխտագնացի տունդարձը, իսկ նրա տան սյուներից մեկի քարե պատվանդանին որդին՝ Ալեքսանը, փորագրել է հոր անունն ու ուխտագնացության տարեթիվը՝ «ՎԱՐԹԱՆ 1866»: Մի շաբաթ անց՝ Խաչվերացի պատարագին, Մուղսի Վարդանը գիրք-մասունքը հանդիսավորությամբ հանձնել է Ազնաբերդի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն:

Այս ամենը ես հստակ պատկերացնում եմ Երուսաղեմից վերադառնալու օրը: Սուրբ քաղաքը առաջին օրվա նման մեղմ անձրևով է ճանապարհում մեզ: Թել Ավիվ տանող ավտոբուսում, որպես վերջաբան մեր ուխտագնացության, ինքս ինձ համար կարդում եմ «Երուսաղեմի պատմության» վերջին էջերին՝ հիշատակարանների մեջ գրված ձեռագիր աղոթք-բանաստեղծությունը, որի պատճենը իմ պայուսակում է՝ Երուսաղեմի թեմի առաջնորդ Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանից երեկ ստացած ուխտագնացի վկայականի թղթապանակում: Ո՞վ գիտի, գուցե հենց Ստեփանոս Երեցի գրչի՞ն է պատկանում այդ ստեղծագործությունը, որ այս անգամ ուրիշ զգացումով եմ կարդում՝ սուրբ վայրերը տեսած մարդու հայացքով...

Հա՛յրդ գթած, քեն հեռացայ,
Զպատիրանդ ոչ պահեցայ,
Անառակին նմանեցայ,
Մեղա՜յ, մեղայ:

Զի թշնամին խոցոտաց զիս
Եվ ընկղմեաց մեղաւորիս,
Արի, Տէ՛ր իմ, այց արա յիս,
Մեղա՜յ, մեղայ:

Կայուն գրական հանդես

Յանապատի մոլորեցայ,
Փառս ի փայլէ պատառեցայ,
Հովի՛ւ բարի, Քեզ յուսացայ.
Մեղա՜յ, մեղայ:
Հարեալ վիրօք ի թշնամուն,
Կարօտացայ ի սպեղանուն,
Նայիմ ի գալ սամարացուն,
Մեղա՜յ, մեղայ:

Երեսս անկեալ քեզ աղաչեմ
Խորոց սրտէս ու հառաչեմ,
Տէ՛ր և Աստուած, զՔեզ գոչեմ,
Մեղա՜յ, մեղայ:

Տէ՛ր իմ Յիսուս, և Դու ներես,
Սո՛ւրբ Տիրուհի, բարէխօսես,
Աստուածատուր պիտակ գերես,
Մեղա՜յ, մեղայ...

Երևանում՝ կրկին Սուրբ Երրորդություն եկեղեցու մոտ, ինձ կդիմավորի սիրելի զարմիկս՝ իմ երեք նվիրական Վարդանների վերամարմնավորումը: Տանը նրան կնվիրեմ Երուսաղեմյան խաչ-տարոսիկը՝ պատգամելով, որ մի օր էլ ինքն անձամբ գնա իր անվանակից նախանախապապի անցած ճանապարհով:

Օրեր անց, խորհրդային հալածանքներից փրկված և գյուղի վերջին քահանայի կողմից Լևոն պապին հանձնված գրքի ազատ լուսանցքում, իմ հիշատակարանը կավելացնեմ. «Սուրբ քաղաք Երուսաղեմի և Տերունական սրբավայրերի մասին պատմող սույն գրքի սեփականատերը Նախիջևանի Ազնաբերդ գյուղի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է: Երբ Աստծու կամոք կվերահայանա Ազնաբերդը, և նրա տարագիր զավակները կրկին տուն կվերադառնան, գիրքն այս անվերապահ կվերադարձվի գյուղի վերակառուցված եկեղեցուն: Նախքան այդ՝ գրքի պահառուն կլինի հոր կամ մոր կողմից Մուղսի-Վարդանյան տոհմի շառավիղներից մեկը»:

Եվ առավել քան համոզված կլինեմ, որ ամենազոր Աստծու անսահման բարեգթությամբ մի պայծառ օր այս նվիրական մասունքը իր նախասահմանված տեղը վերադառնալու բախտն ու երջանկությունը կունենա:

Կայարան

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

КАЯРАН

альманах

современная проза

Հրատարակչության խմբագիր՝
Գալյա Հովհաննիսյան-Կիրակոսյան

Համակարգչային ձևավորումը՝
Լիանա Մինասյանի

Կազմի ձևավորումը՝
Ալվարդ Օհանջանյան

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափսը՝ 70x100 1/16
Ծավալը՝ 4 տպ. մամուլ
Տառատեսակը՝ Ghabuzian Mymekh
Տպաքանակը՝ 200

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ЭДИТ ПРИНТ
Ереван, ул.Туманяна12
Тел.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am